Հայոցյանը նշեց, որ ռեկտորի պաշտոնի մրցույթի մասին չի կարող ոչինչ ասել, քանի որ մրցույթը հայտարարում է հոգաբարձուների խորհուրդը, իսկ հոգաբարձուների խորհրդի ժամկետն էլ է ավարտվել այս տարվա օգոստոսի 7-ին, եւ այն ձեւավորման փուլում է: Բայց օրենքը խախտելու համար էլ նա ասում է՝ անցումային շրջան է, ոչինչ:

Կարդացեք՝ էջ 4

Եթե Թել Ավիվը հետեւեր նախահարձակ չլինելու, իր տարածքից դուրս կանխարգելիչ հարվածներ հասցնելու արգելքի ռազմավարությանը, Իսրայել պետությունն այսօր գոյություն չէր ունենա: Որովհետեւ պարտված կլիներ 1967 թ. պատերազմում: Ինչպես գոյություն չունի Արցախը, որը նախահարձակ չեղավ եւ կանխարգելիչ հարված չհասցրեց:

Կարդացեք՝ էջ 5



Կոնչալովսկու սերիալում 150 պատմական դեմքեր կան, այդ թվում՝ Լենին, Ռասպուտին, տերտեր Գապոն, Տրոցկի, Ստալին, Գորկի եւ Բլոկ, Քշեշինսկայա, Եսենին, Մայակովսկի եւ այլք: Դերասաններին ընտրել են ոչ միայն արտաքին նմանությամբ, այլ նաեւ՝ տեմպերամենտի համընկնումով, իրական նախատիպերին համապատասխանությամբ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 178 (4080), 8 նոյեմբեր, շաբաթ, 2025

www.hraparak.am

44-օրյա պատերազմի զեկույցի հարցում իշխանության դիրքորոշումը ցույց է տալիս, որ խնդիրը ոչ այնքան ժամկետներն են, որի պատրվակով ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն այն չընդգրկեց լիագումար նիստերի օրակարգում, որքան քաղաքական է: Հիշեցնենք, որ զեկույցն ուղարկվել է Հատուկ բաժին, որտեղ միայն գաղտնի տեղեկատվության «դոստուպ» ունեցող պատգամավորները կարող են դրա հետ ծանոթանալ: Զեկույցն անգամ չի ուղարկվել իրավապահ կառույցներին՝ ԱԱԾ, Դատախազություն, Քննչական կոմիտե եւ այլն, որոնք կծանոթանային հանձնաժողովի շուրջ երկու տարի ձգված ուսումնասիրություններին, եւ, ինչպես հանձնաժողովի ղեկավարն է բազմիցս վստահեցրել, կարող էին քրեական գործեր հարուցելու հիմքեր հայտնաբերել: Մինչդեռ իշխանությունը որոշել է այն թաքցնել հանրությունից: Նույնիսկ եթե զեկույցը չի բացահայտում Նիկոլ Փաշինյանի մեղքերը, այն կարող է հակառակ դերը խաղալ՝ կարող է պարզվել, որ Փաշինյանն ամեն ինչ արել է, որ Արցախը պահենք, իսկ 23-ին Արցախի կորստից հետո հրապարակավ ստում է, որ Արցախը մերը չի եղել դեռ 90-ականներից, եւ իր միակ մեղքն այն է, որ 2018-ին մեզ չի ասել այդ մասին: Այդուհանդերձ տեղեկացանք, որ Անդրանիկ Քոչարյանը մտադիր է զեկույցն ուղարկել իրավապահներին:

Մի քանի օր առաջ գրել էինք, որ Էջմիածնի քաղաքապետի ՔՊ թեկնածու Արգիշտի Մեխակյանն այնքան է նեղվել հոր ուխտն ուրանալու մասին մեր եւ այլ լրատվամիջոցների հրապարակումներից, որ դեպրեսիայի մեջ է ընկել եւ անգամ ցանկացել է կես ճանապարհին դուրս գալ պայքարից, սակայն նրա քարոզարշավի կնքահայրը՝ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, համոզել, հետ է բերել: Բայց Մեխակյանի հոգեվիճակը չի հանդարտվել, եւ որպեսզի նրան խաղաղեցնեն, օրերս Էջմիածնի շտաբում մինի ժողով են արել, որին մասնակցել են Խուդաթյանը, Արմավիրի մարզպետը, շտաբի այլ անդամներ եւ որոշում են կայացրել, որ այսուհետ միայն յուրային լրատվամիջոցների հետ պետք է թեկնածուն շփվի: Նրանց, որոնք վտանգ չեն ներկայացնում թեկնածուի համար եւ տհաճ հարցեր չեն տա: Հավաքի ընթացքում մի բոլ վայրահաչել են լրատվամիջոցների հասցեին, եզրակացրել, որ «լրատվամիջոցները նախկիններից կոռումպացված են»՝ պետք է նրանցով էլ զբաղվել: Հիշեցնենք, որ իշխանական այս թիմը 18-ից առաջ նույն լրատվամիջոցներին սրբադասում էր ու գիշեր-ցերեկ սեր խոստովանում:

Հարցեր, որ չհնչեցին

Վարչապետ Փաշինյանն օրերս «ամոթանք» է տվել լրագրողներին, թե ինչու չեք կաթողիկոսի՝ կուսակրոնությունը խախտելու եւ զավակ ունենալու մասին հարցեր ուղղում Վեհափառին, այդ հարցերն ո՞վ պետք է տա, եթե ոչ դուք: Թողնենք, որ եթե խմբագիր ու լրագրող եղած ժամանակ մեկը նման կերպ նախատեր իրեն, ի՜նչ լրբություն կկապեր՝ այնպես, որ նման բան ասողը մի 10 անգամ կփոշմաներ իր ասածի համար: Բայց դե, այսօրվա լրագրողներն իր չափ լաչառ չեն ու իր նման «աբառոտկա ֆռռալ» չգիտեն՝ նրանք համեստորեն լսում էին, չէին արձագանքում: Թեեւ արժեր, որ հակադարձեին: Ասեին՝ այդ հարցերը որոշ հիվանդ գլուխներում են ծագել եւ ո՛չ մեզ, ո՛չ մեր հանրությանն այսօր չեն հետաքրքրում, դա կեղծ օրակարգ է՝ ձեր կողմից առաջ քաշված, որը ոչ մի կապ չունի մեր երկրի ու մեր իրականության հետ: Հասկանալի է, որ դուք ամեն ինչ անում եք, որ հանրությունը չլսի Ալիեւի բարբաջանքները, չհարցնի՝ ի՞նչ եղավ սահմանազատման հարցը, մեր գերիների վերադարձը, ՀՀ 200 քառակուսի կիլոմետրից թշնամու զորքի դուրս գալու հարցը: Ի՞նչ եղավ նախաստորագրված, բայց այդպես էլ չստորագրված խաղաղության պայմանագիրը: Պետք է նրան մեղադրեին Արցախի հարցը փակելու, Մինսկի խումբը լուծարելու, Արցախ վերադարձի թեման չբարձրացնելու, միջազգային ատյաններից հայցերը հետ կանչելու համար: Հարցնեին՝ ո՞ր իրավունքով եք Հայաստանը դարձրել քաղաքական հետապնդումների թատերաբեմ, ինչո՞ւ են կալանավորվում ընտրված համայնքապետերը, ինչո՞ւ եք խլում Կարապետյանների սեփականությունը, ինչքա՞ն են բանտում մնալու արքեպիսկոպոսները: Վերջապես՝ ի՞նչ եք ուզում Եկեղեցուց, ինչքա՞ն է շարունակվելու այդ ամոթալի արշավը: Ձեզ ի՞նչ, թե ով ինչով է զբաղվում, ով քանի զավակ ունի՝ դա ձեր անմիջական պարտականությունների հետ ի՞նչ կապ ունի:

Մեր տեղեկություններով, Ռոբերտ Քոչարյանը հարցազրույց է տվել 5-րդ ալիքին, որը կցուցադրվի այսօր կամ վաղը՝ նոյեմբերի 9-ին: Հարցազրույցի առանցքում 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունն է, որի տարելիցն է այս օրերին: Հիշեցնենք, որ Քոչարյանն մեկ ամիս առաջ՝ հոկտեմբերի 8-ին էր ասուլիս հրավիրել: Թե ինչ նոր ասելիք ունի, թերեւս կիմանանք հարցազրույցից: Ի դեպ, երեկ երեկոյան էլ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանն էլ հյուրընկալվել է «Իմներմիմի» պոդքաստին: Իսկ կապիտուլյացիայի խորհրդանշական օրը՝ նոյեմբերի 9-ին, Փաշինյանը հերթական խայտառակ ծեսն է ծրագրել՝ Եկեղեցու դեմ արշավի շրջանակներում մասնակցելու է Թալինի վանքում Թադեւ քահանայի կողմից մատուցվելիք պատարագին, որը թեեւ կարգալույծ արված չէ, սակայն դեմ է դուրս եկել Մայր Աթոռին եւ անցած շաբաթ մասնակցել է «ապօրինի պատարագին»:

ԱՅՍ ԿԱՐԳԱԼՈՒՅԾԻ ՀԱՐԱՁԱՏՆԵՐՆ ԷԼ ԵՆ ՀԱԵ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Նոյեմբերի 6-ին Գարեգին Երկրորդ կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տավուշի թեմի հոգեւոր սպասավոր Տարոն քահանա Հունանյանը: Նման որոշման համար հիմք են հանդիսացել Տավուշի թեմի առաջնորդական տեղապահի զեկուցագիրը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախմբի եզրակացությունը, որով վերջինս 2024 թվականի մայիսից ինքնակամ լքել է իր ծառայության վայրը, անտեսել է Տավուշի թեմի առաջնորդական տեղապահի հորդորներն ու հրահանգները եւ հարատեւել կարգազանց ընթացքի մեջ, մասնակցել է կարգազուրկ հռչակված Ստեփան Ասատրյանի կազմակերպած հակականոնական արարողությանը՝ մեղսակից դառնալով կարգալուծվածին, հրապարակային ելույթներով ու հայտարարություններով վարկաբեկել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ ծառայակից եկեղեցականներին, անարգալից վարքագիծ է դրսեւորել եկեղեցական բարձրագույն իշխանության նկատմամբ եւ դրժել հնազանդության ուխտը: Տավուշի թեմի առաջնորդական տեղապահ Տեր Սամվել վարդապետ Մխիթարյանին հարցրինք կարգալույծ եղած քահանայի եւ Տավուշի թեմում նրա ծառայության մասին: Առաջնորդական տեղապահը նրան կարճ բնութագրեց՝ անպատասխանատու: Տեր Սամվել վարդապետ Մխիթարյանը հայտնեց նաեւ, որ կարգալույծ եղած Տեր Տարոնի՝ Վարդան Հունանյանի հարազատ եղբայրը՝ Տեր Հարությունը, ներկայում որպես քահանա ծառայում է Վարդենիսում, իսկ հորեղբայրները Հայ առաքելական եկեղեցու քահանաներ են Կրասնոդարում:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԾԵԾՎԱԾ ՏՂԱՄԱՐԴԸ «ԲՐԱՍԼԵՏ» Է ԿՐՈՒՄ, ԻՍԿ ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ՉԱՂ ՈՒ ԲԱԽՏԱՎՈՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՊԱՇՏՈՆԱՎԱՐԵԼ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Սեպտեմբերի 15-ին հերթական սկանդալը պայթեց հայկական լրատվամիջոցներում. Կադաստրի կոմիտեի նախագահ Սուրեն Թովմասյանի հրահանգով մարդ էին ծեծել՝ քաղաքից դուրս գտնվող մի լքված գործարանի տարածքում: Այս մասին ԶԼՄ-ներին պատմել էր ծեծված տղամարդու կինը: Երեկ մեզ ահազանգեցին, թե այս դեպքով նախաձեռնված վարույթը քննիչները փորձում են շուռ տալ ծեծվողի՝ Կադաստրի կոմիտեի Շենգավիթի գրասենյակի սրահի նախկին պատասխանատու Արթուր Կնյազյանի դեմ: Նրա դեմ գործ են հարուցել, խափանման միջոց կիրառել՝ վարչական հսկողություն: Նա հիմա «բրասլետ» է կրում, իսկ Սուրեն Թովմասյանը չաղ ու բախտավոր շարունակում է պաշտոնավարել եւ ընդամենը վկայի կարգավիճակ ունի:

Կնյազյանը, կնոջն աշխատանքից ազատելու փաստից վրդովված, եկել է Կադաստրի կոմիտե, որ պետի մոտ մտնի, սակայն թույլ չեն տվել, դուրս է եկել եւ «հաղորդագրություն է ուղարկել՝ հայհոյանքներով»,- պատմում է մեր աղբյուրը: Հետո մոտ 4-5 տասնյակ մարդ գնացել են եւ խմբակային ծեծի ենթարկել Կնյազյանին: Գործ է հարուցվել, բայց մեղադրյալի կարգավիճակ, մեր տեղեկություններով, ունի միայն 2 անձ՝ ոմն Ռոման, Շենգավիթից, եւ Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանի եղբայրը՝ Խաչատուր Խաչատրյանը: Նրանց մեղադրանքներ են առաջադրված ՔՕ 167-րդ հոդվածի 2-րդ մասով՝ առողջությանը խմբով միջին ծանրության վնաս պատճառելը, 191-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մարդուն խմբով առեւանգելը: Տեղեկություն կա, որ քննիչները շուտով հանելու են առեւանգման վերաբերյալ մեղադրանքը, թեեւ հայտնի է, որ Արթուր Կնյազյանին բռնությամբ տեղափոխել են ու ապօրինաբար պահել: Ծեծի գործով կալանավորված անձ չկա: Ռոմանի նկատմամբ տնային կալանք են կիրառել, իսկ Խաչատուր Խաչատրյանից չբացակայելու ստորագրություն են վերցրել:

Հիշեցնենք. Կադաստրի կոմիտեի աշխատակից, արտաքին կապերի բաժնի գլխավոր մասնագետ Վերոնիկա Միքայելյանին ազատել էին աշխատանքից, որից հետո նրա ամուսինը՝ Արթուր Կնյազյանը, կոպիտ sms է գրել կնոջ ղեկավարին, ինչին էլ հետեւել է դաժան հաշվեհարդարը: Քննչական կոմիտեից չեն ցանկանում տարրական հարցերի պատասխանել, անգամ չեն ասում, թե ինչ մեղադրանքներ են առաջադրվել ծեծողներին, եւ ճիշտ է արդյոք, որ ընդամենը երկու մեղադրյալ կա գործում: Ի սկզբանե պարզ էր, որ Քննչական կոմիտեն չի պատրաստվում պատասխանատվության ենթարկել Կադաստրի կոմիտեի նախագահին: Դեպքից անմիջապես հետո, դեռ նախաքննությունը չավարտված, երբ վարույթը նոր էր նախաձեռնվել, ՔԿ-ն, առանց գրավոր հարցումների սպասելու, հաղորդագրություն տարածեց՝ ցույց տալով, որ Կադաստրի կոմիտեի ղեկավարի թիկունքին ամուր կանգնած է. «Տեղեկատվությունը, թե Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը եւ գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանը մասնակցություն ունեն քաղաքացու առեւանգման եւ ծեծի ենթարկելու մեջ, չի համապատասխանում իրականությանը»:

Մինչդեռ Արթուր Կնյազյանի կինը՝ Վերոնիկա Միքայելյանը վստահ է, որ Կադաստրի կոմիտեի ղեկավարը եւ գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանն են ղեկավարել «օպերացիան»: «Միեր Խաչատրյանի եղբայրը եղել է դեպքի վայրում, սա անհերքելի փաստ է, նրան մեղադրանք են առաջադրել»,- ասում է Վերոնիկա Միքայելյանը:

Քննությանը մոտ կանգնած անձը պատմեց, որ գործով վկա Սուրեն Թովմասյանը ցուցմունք է տվել առ այն, որ միջադեպի ժամանակ ինքը գտնվել է Միեր Խաչատրյանի տանը: Ասում են՝ նրանք զանգերով անընդհատ հեռախոսակապով կառավարել են ծեծողների՝ Ռոմանի եւ Միեր Խաչատրյանի եղբոր գործողությունները: Այս լուրերի իսկությունը ստուգելու համար երկար-բարակ քննություն պետք չէ՝ բավական է ընդամենը վերծանել Թովմասյանի եւ Խաչատրյանի հեռախոսազանգերը, եւ պարզ կլինի, թե արդյոք Սուրեն Թովմասյանն ու Միեր Խաչատրյանը կապ ունեցե՞լ են Կնյազյանին ծեծողների հետ, թե՞ ոչ:

Ըստ տարածված եւ քննչականի կողմից չհերքված տեղեկությունների, ծեծողները եղել են 40-50 հոգի: Զարմանալի է, որ մեղադրանք է առաջադրվել ընդամենը 2 անձի: «Զուտ Աստված է փրկել, որ ամուսինս ողջ է մնացել: Ողերն են ջարդել, ակնակապիճներն են վնասել, գանգուղեղային բազմակի վնասվածքներ է ստացել, ձախ աչքն արդեն երկու ամիս է՝ չի տեսնում: Նոր-նոր սկսել է վերականգնվել տեսողությունը»,- գանգատվում է Վերոնիկա Միքայելյանը: Փոխարենը Արթուր Կնյազյանի նկատմամբ են մեղադրանք առաջադրել՝ այն բանի համար, որ նա զայրացած պահին ձայնային «ոչ հաճելի» հաղորդագրություն է ուղարկել Սուրեն Թովմասյանին՝ կոպտել նրան: Քննիչները Կնյազյանի sms հաղորդագրության մեջ սպառնալիք են լսել, որոշել են, որ նա խոչընդոտել է պաշտոնյայի գործունեությունը: Քրեական գործը նրա դեմ հարուցված է ՔՕ 452-րդ հոդվածի՝ «Պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը», առաջին մասով՝ սպառնալիք:

Պարզվում է՝ Թովմասյանի ղեկավարած հիմնարկում անառողջ բարքեր են տիրում: Կադաստրի աշխատողները պատմում են, որ Թովմասյանի եւ Կադաստրի կոմիտեի Շենգավիթի գրասենյակի սրահի նախկին պատասխանատու Արթուր Կնյազյանի հարաբերությունները վաղուց են լարվել՝ դեռ քովիդի ժամանակներից: Ասում են, որ Թովմասյանը, շրջայց կատարելով կոմիտեի գրասենյակներով, կոպիտ դիտողություն է արել Շենգավիթի սրահում աշխատող աղջիկներին: Արթուր Կնյազյանը պաշտպանել է իր ենթականերին՝ ասելով, որ դիտողությունը սխալ է: Հենց այդ ժամանակ էլ ծագել է առաջին կոնֆլիկտը նրանց միջեւ: «Թովմասյանն «արա»-ով է խոսել Կնյազյանի հետ, վերջինս էլ տակ չի մնացել: Դե, Կնյազյանն էլ հեշտ անձնավորություն չէ»,- ասում է կադաստրի մեր աղբյուրը:

«Դրանից հետո համակարգը սկսել է աշխատել ամուսնուս դեմ: Նույնիսկ Շենգավիթի գրասենյակը, որտեղ ամուսինս աշխատել է երկար ժամանակ, փակեցին, միացրին կենտրոնի հետ, որ ամուսնուս աշխատանքից ազատեն: Նրան իր պաշտոնին անհամապատասխան աշխատանք առաջարկեցին, որին նա չէր կարող համաձայնել, ամեն ինչ արեցին, որ նա զզվի, դուրս գա»,- պատմում է Կնյազյանի կինը: Ամուսնու՝ աշխատանքից ազատվելուց մի քանի ամիս հետո ինքը մասնակցել է քաղծառայության մրցույթին ու հաղթել, սակայն կոմիտեում չի ասել, որ Կնյազյանի կինն է: «Երբ բաժնում իմացան, թե ում կինն եմ, արշավ սկսվեց իմ դեմ: Սուրեն Թովմասյանն իր քարտուղարուհուն նշանակեց վարչության պետ, ու սկսվեցին իմ դժոխային օրերը Կադաստրի կոմիտեում»,- հիշում է Վերոնիկա Միքայելյանը: Այս պատմության հերոսներից մեկն էլ՝ Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյանը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախկին ղեկավար Սասուն Խաչատրյանի հորեղբոր որդին է:

ՁԵՐ ՀԱՅՐՈՒՐԱՑ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ ՉԵՆՔ ՈՒԶՈՒՄ՝ ՊԱՀԵՔ ԶԵՁ

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը մեկ շաբաթ է, ինչ արձակուրդում է՝ Վաղարշապատի ընտրություններում ՔՊ թեկնածուի քարոզարշավին ակտիվ մասնակցելու համար: Նիկոլ Փաշինյանը Խուդաթյանի հետ է հույս կապում՝ հաշվի առնելով այն, որ նա Արմավիրի քաղաքապետն էր, ապա՝ մարզպետը, հիմա տարածքայինի նախարարն է եւ կարողացել էր ավագանու ՔՊ-ական 100 տոկոսանոց կազմ ձեւավորել, որը, ի դեպ, աշխատում է նաեւ այսօր՝ հերթական համայնքապետի հետ:

Չնայած Դավիթ Խուդաթյանն ու նախկին սոցապնախարար, այժմ ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Նարեկ Մկրտչյանը, Արմավիրի նախկին մարզպետ, այժմ՝ շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանը տապալել էին Փարաքարի ընտրությունները, որով նույնպես շատ ակտիվ զբաղվում է, բայց Նիկոլ Փաշինյանը որոշել է նրանց մեկ անգամ եւս «առաջնագիծ» գործուղել, այս անգամ՝ Վաղարշապատ:

Էջմիածնի դպրոցներից մեկի տնօրենը, որի անձը չենք բացահայտում, որ աշխատանքից չազատեն, Փաշինյանին ու նրա շրջապատին խորհուրդ է տալիս Էջմիածինը չհամեմատել ո՛չ Արմավիրի, ո՛չ Փարաքարի հետ: Ասում է՝ Արմավիրը Թալինից, Գյումրիից ու այլ տեղերից վերաբնակեցված մարդկանցով ստեղծված համայնք է՝ ասելիք եւ ուրույն նկարագիր չունեցող: Խմբեր կան՝ տարանջատ, որոնց կամքին տիրել են՝ մաս-մաս հետներն աշխատելով: «Իսկ Էջմիածինը հազարամյակների պատմություն ու բնավորություն ունեցող քաղաք է, որին «կուտ տալ» չի կարելի: Եթե Դավիթ Խուդաթյանին հաջողվել է Արմավիրում միատարր ավագանի ձեւավորել ու համայնքը փոխանցիկ դրոշի պես մի ՔՊ-ականից մյուսին փոխանցել, չի նշանակում, որ նույնը կարող է անել նաեւ Էջմիածնում, որովհետեւ այս քաղաքը հիշողություն ու արժանապատվություն ունի, սուտն ու կեղծիքը չի հանդուրժում: Դիանա Գասպարյանն էլ էր, չէ՞, ՔՊ-ական: Բավական չէ՝ քաղաքի համար ոչինչ չարեց, իր տերերին էլ «քցեց»: Հիմա էլ բերել, հայրուրաց Մեխակյանին են սկուտեղի վրա մատուցում: Չենք ուզում՝ պահեք ձեզ, դուք արդեն ապացուցել եք, որ սեփական բարեկեցությունն ապահովելուց զատ, այլ բանի ընդունակ չեք»,- ասաց զրուցակիցս:

Նրան վիրավորել է իր գործընկերների՝ դպրոցների տնօրենների, ուսուցիչների նկատմամբ ՔՊ-ի «ռեպրեսիվ» պահվածքը: Ցավում է, որ իշխանության թողտվությամբ Արգիշտի Մեխակյանն անհիմն ու շինծու հիմնավորումներով պաշտոնանկ է անում դպրոցների ու մանկապարտեզների տնօրեններին: «Կոպտորեն փակում է մտավորականի բերանը: Վերջին մեկ ամսում դպրոցի երկու եւ մանկապարտեզի մեկ տնօրենի է ազատել աշխատանքից, որովհետեւ «հանդգնել» են մերժել ՔՊ-ին: Եվ ի՞նչ: Կարծում է վախեցրո՞ց, թե՞ ընդհակառակը՝ վանեց նաեւ մյուսներին: Մեխակյանի ու նրա հովանավոր Խուդաթյանի կարճ խելքով՝ բռնաճնշումներն իրենց օգտին են աշխատելու: Նյու Յորքում էլ էր Թրամփի թիմն ամեն գնով պայքարում քաղաքապետի իր թեկնածուի հաղթանակի համար, բայց ինչ-որ մահմեդական երիտասարդ հաղթեց, չէ՞... Բա սրանց ինչի՞ է թվում, թե մատն ում վրա դնեն, քաղաքապետ են դարձնելու»:

Գյուղացու նկատմամբ խորին հարգանքով հանդերձ, զրուցակիցս չթաքցրեց իր զայրույթը գյուղաբնակների պահվածքից. «Գյուղերից եկել՝ քաղաքն իրենց ձեռքը վերցնել են ուզում: Արգիշտի Մեխակյանի քարոզարշավին եմ հետեւում. ոչ մի ծանոթ դեմք չկա, բոլորը գյուղերից են՝ Մեխակյանից սկսած, Խուդաթյանով ու մարզպետ Խաչատրյանով վերջացրած: Շատ ծիծաղելի է՝ գյուղի ցեխերից եկել, քաղաքի ասֆալտից են խոսում, եւ մեզ՝ հոգեւոր մայրաքաղաքի բնակիչներիս, քաղաքային կյանքի, կենցաղավարության դասեր են տալիս: Քարուքանդ փողոցներով քարոզարշավ են անում, ընտրվելու դեպքում նորոգելու խոստումներ տալիս՝ անհարմար չզգալով, որ նույն խոստումները նույն փողոցներով անցնելիս բարբաջել է նաեւ իրենց թիմակից, նախկին քաղաքապետ Դիանա Գասպարյանը»:

Զրուցակցիս վերլուծությամբ՝ եթե ընտրակեղծիքներ չլինեն, ՔՊ-ի թեկնածուն չի հաղթի: «Բայց Մեխակյանի պարտությունից էլ եմ վախենում: Դրա տերերը թույլ չեն տա, որ հանգիստ ապրենք: Մի կինո էլ Էջմիածնում կնկարեն՝ հաղթած համայնքապետին փակելու համար»:

Արդարադատություն չկա, Գալյան կա

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը հոկտեմբերի 29-ին տեսանյութով էր հանդես եկել, որտեղ հայտարարում էր, թե քաղաքացիներին հրավիրում է երկխոսության, քաղաքացիները կարող են իրենց հարցերն ուղարկել նախարարություն՝ պատրաստ է պատասխանել դրանց: Թղթի վրա ամեն ինչ լավ էր հնչում, բայց իրականությունը ցույց տվեց, որ հերթական ձեւականությունն էր, այլ ոչ թե իրական երկխոսություն: Քաղաքացիներն իրենց հարցերը նախարարին պետք է ուղարկեին էլեկտրոնային փոստով եւ ստանային պատասխան: Տեսանյութին կից նշված էր. «Արդարադատության նախարարության ոլորտին առնչվող եւ ձեզ հուզող հարցերն ուղարկեք մեր պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ info@moj.am»:

Սակայն «երկխոսությունը» չստացվեց, տեսանյութի մեկնաբանությունների դաշտում հարյուրավոր մարդիկ սկսեցին գրել՝ Հայաստանում արդարադատություն գոյություն չունի, նախարարության էլփոստն անգամ չի գործում: «Բայց դուք գիտե՞ք, որ ձեր էլեկտրոնային փոստը նորմալ չի էլ գործում, մտնում ես՝ էջը անկապ հարցեր է տալիս, վերջում էլ չի բացում: Մեկ էլ՝ հեռախոսավարուհիները չգիտեն՝ ոնց օգնել: Էլ որտեղի՞ց արդարադատություն լինի»: Մեկ այլ օգտատեր գրել էր, որ նախարարությունը պետք է ղեկավարի ոլորտին ծանոթ մասնագետ, ոչ թե մարդ, որը պաշտոնը ստանալուց հետո նոր սկսում է հասկանալ իր գործը: Գրել էին. «Արդարադատություն չկա, նախարարը կա»: Ոմանք էլ քննադատում էին, որ նախարարն անտեսում է իշխանության ապօրինությունները. «Տիկին նախարար, ե՞րբ եք պատրաստվում դիմել ակնաբույժի՝ Նիկոլ Փաշինյանի ապօրինությունները վերջապես տեսնելու համար»:

Նախարարի խոսնակ **Մարիամ Մելքումյանից** հետաքրքրվեցինք՝ քանի՞ հարց են ստացել, ի՞նչ բնույթի են դրանք, վերջնաժամկետը ե՞րբ է: «Հարցերը տարբեր են, բայց ամփոփում դեռ չենք արել: Վերջնաժամկետ չենք սահմանել: Դեռ ստանում ենք: Հավաքագրման փուլում ենք, երբ վերջնականացնենք՝ ինֆորմացիա կտանք»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԻՐԵՆՔ ԴԵՌ ՉԵՆ ԳԱԼՈՒ, ՀՆԱՐԱՎՈՐ Է՝ 50 ՏԱՐՈՒՑ

Մինչ ՀՀ իշխանությունները հրճվանքի մեջ են՝ ռուսական ցորենը ոչ թե Փոթիով է եկել Հայաստան, այլ՝ Ադրբեջանով, որտեղից էլի մտել է Վրաստան ու մի քիչ ավելի երկար ճանապարհով հասել Հայաստան, ՀՀ շարքային քաղաքացիներն անհանգստացած են: Լրատվամիջոցների, այդ թվում՝ «Հրապարակի» հարցումներից պարզ է դառնում, որ մեր հայրենակիցները, ի հեճուկս իշխանականների, ցնծության մեջ չեն, նրանք չեն վստահում թշնամի հարեւանին եւ կասկածներ ունեն, որ մի օր Հայաստան մտնող ցորենը մեր ոխերիմ հարեւանները կթունավորեն: Զրուցել ենք ՔՊ-ական պատգամավոր **Մարինա Ղազարյանի** հետ:

- Մինչ դուք՝ իշխանականներդ ցնծում եք, որ ցորենն Ադրբեջանով է Հայաստան եկել, Ադրբեջանը բացեց երկաթուղային հաղորդակցությունը եւ այլն, շարքային քաղաքացիները, մեղմ ասած, տագնապած են, կասկածում են, որ գուցե Ադրբեջանը թունավորի ցորենը՝ հաշվի առնելով իր նկրտումները: Ձեր թիմում քննարկե՞լ եք այս հարցը եւ ինչպե՞ս եք փարատելու մարդկանց կասկածները:

- Չէ, չի եղել մեզ մոտ քննարկում, որովհետեւ մենք վստահում ենք... Ցորենը եկել է, ոչ մեկ չի բացում՝ ոնց դուրս է եկել, էդպես հասել է Հայաստան, պլոմբված է, ինչո՞ւ պիտի վախենամ: Տեսեք, որ Դուք ասում եք, ես անկեղծորեն զարմանում եմ՝ ես ոչ մեկից նման անհանգստություն չեմ լսել: Որեւէ մեկը չի մոտենում այդ վագոններին, ի՞նչ խնդիր կա, արհեստական բաներ ենք սարքում մեր ժողովրդի գլխին: Ես խնդրում եմ՝ մեր ժողովրդին փոխանցեք, որ ամեն ինչ օքեյ է, թող չանհանգստանան:

- Իսկ ինչո՞ւ չեք մտածում, որ որոշ ժամանակ նորմալ կուղարկեն, կբթացնեն հայերի զգոնությունը, բայց մի օր էլ իրենց սեւ գործը կանեն:

- Լավ, էլի, ինչո՞ւ եք Դուք ընտենց մտածում:

- Ադրբեջանին ձեր չափ չեն վստահում մարդիկ:

- Պիտի սկսենք միմյանց վստահել, բայց ստուգել:

- Դիմացն Ադրբեջանն է:

- Կապ չունի, մենք պետք է Ադրբեջանի հետ կարողանանք ապրել խաղաղ պայմաններում, բայց մենք ամեն դեպքում անվտանգությունը պահում ենք, սննդի անվտանգություն է: Այնպես չի, որ մենք բացթողում ենք արել, ամեն ինչ արվում է օրենքի շրջանակներում: Մարդիկ պետք չի, որ խուճապի մատնվեն: Ես էլի եմ կրկնում՝ չեմ հանդիպել նման տեսակետներ: Երկու օր է՝ Դիլիջանում էի, հիմա Սյունիքում եմ, շփվել եմ մարդկանց հետ, մտահոգություններ չեմ լսել:

- Ի դեպ, Դուք ե՞լ էիք Կիրանց գնացել:

- Ոչ, մենք երկու օր Դիլիջանում անվտանգային հարցեր էինք քննարկում, մեր՝ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ պաշտպանության ու անվտանգության հանձնաժողովները:

- Բայց 300 հազար ադրբեջանցիներ, որ գան...

- Ես տեղյակ չեմ, ես չեմ լսել նման բան:

- Եթե Ալիեւի այդ ցանկությունն էլ կատարվի, Դուք պատրա՞ստ եք նրանց հետ կողք-կողքի ապրել:

- Ցորենն ուրիշ բան է, վերաբնակեցումը՝ ուրիշ բան... իրենք էլ չեն գալու դեռ, տեսեք, ասում եմ՝ դեռ: Հնարավոր է 50 տարի հետո մենք կարողանանք ադրբեջանցիների հետ ապրել, ես չեմ կարծում, որ այդ պրոցեսը շատ հեշտ է լինելու, դժվար ենք անցնելու, բայց դա չի նշանակում, որ...

- Իսկ ի՞նչ գիտեք, որ ադրբեջանցիները չեն գալու, օրինակ, ինչո՞ւ եք բացառում, որ այդ երկրի հատուկ ծառայության աշխատակիցներին չեն բերի տասնյակներով լցնեն, ասենք, Սյունիքի հեռավոր գյուղերից մեկում, նրանք էլ, պարզ է, չէ՞, ինչ տեռոր կանեն, ինչպես կհայաթափվի Սյունիքը:

- Ո՞վ, ո՞վ ա տանելու, ո՞վ ա հայաթափ անելու Սյունիքի գյուղերը, թող մի հատ բախտները փորձեն: Գիտեք՝ Սյունիքից որեւէ մեկը չի լքել իր գյուղը սահմանամերձ, ընդհակառակը՝ շենացնում են, եւ ես ուրախ եմ, որ մեր սյունեցիներն այդպիսին են:

- Եթե Ալիեւը սկսել է շրջանառել, որ Սեւան չկա, միշտ Գյոկչա է եղել, ինչո՞ւ պետք է մարդիկ հավատան ձեր բերած խաղաղությանը:

- Ինքն է, չէ՞, ասում, ես չեմ ասում: Իսկ ինքն ինչ-որ բանի վրա ազդո՞ւմ է, փոխո՞ւմ է մեզ մոտ, իհարկե՝ ոչ:

- Ցավոք, մինչ օրս ինչ ասել է, եղել է, ասում էր՝ Արցախը ձերը չէ, մերն է, իրենցը դարձավ:

- Չէ, Արցախի թեման այլ է, մենք կարող ենք այս թեմայով երկար խոսել, բայց հիմա ժամանակը չէ, կխոսեմ, ու կհասկանաք, թե ինչու ենք կորցրել Արցախը:

- Բայց դուք գիտե՞ք, որ գնացեք, ասացիք, որ Ադրբեջանի հետ պետք է կարողանանք խաղաղ ապրել, բայց, օրինակ, Ձեր գործընկեր Նարեկ Ղահրամանյանն այսօր ասել է, որ ինքը պատրաստ չէ ապրել ադրբեջանցիների հետ, Դուք պատրա՞ստ եք, օրինակ, ադրբեջանցիների հետ ապրել Հայաստանում, չէ՞ որ տեւական ժամանակ է՝ Ալիեւը խոսում է 300 հազար ադրբեջանցիների Հայաստանում բնակեցնելու մասին:

- Դե հիմա ինքը պատրաստ չէ, ես էլ ասում եմ, որ ապրում եմ ՀՀ տարածքում, պահում եմ իմ սահմանները, ոտնձգություն չունեմ Ադրբեջանի տարածքների նկատմամբ, բայց իմ սահմանները պահում եմ, բայց ապրում եմ ՀՀ տարածքում:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am



ԱՅՍ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՍ ՉԵՄ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

Նոյեմբերի 6-ին, ժամը 16:00-ի սահմաններում կտրուկ վատացել էր Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի առողջական վիճակը, որը բանտային կալանք է կրում «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում: Վարդան Ղուկասյանի պաշտպան Զարուհի Փոստանջյանն անմիջապես մեկնել էր բժշկական կենտրոն եւ այնտեղից ուղիղ եթեր մտել: «Քրեակատարողական հիմնարկի անձնակազմն անմիջապես հրավիրել է շտապ բժշկական օգնություն, եւ Վարդան Ղուկասյանը տեղափոխվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Վարդան Ղուկասյանը կալանավայրում էր արդեն 19 օր, մինչ այդ վարույթն իրականացնող մարմինը եւ դատարանը տեղեկացված էին նրա առողջական խնդիրների մասին, սակայն, այնուամենայնիվ, որոշում էր կայացվել նրա կալանավորման վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկատվություն Վարդան Ղուկասյանի առողջական վիճակի եւ հետագա գործողությունների մասին կտրամադրվի ըստ անհրաժեշտության»,- նշել էր փաստաբանը:

Հիշեցնենք. Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանը երկու ամսով կալանավորվել է: Հակակոռուպցիոն կոմիտեից ավելի վաղ հայտնել են, թե ստացվել են փաստական տվյալներ, ըստ որոնց՝ Գյումրու համայնքապետը եւ գլխավոր ճարտարապետը, նախնական համաձայնությամբ, պահանջել եւ ստացել են կաշառք-գումարներ: Ապա այս մեղադրանքին ավելացավ նաեւ ՀՀ ինքնիշխանության դեմ ոտնձգությունների դրվագը՝ կապված Ղուկասյանի այն հայտարարության հետ, թե Հայաստանը պետք է միանա Ռուսաստան-Բելառուս միությանը:

Իսկ երեկ տեղեկացանք, որ Ղուկասյանին ԲԿ-ից արդեն ՔԿՀ են տեղափոխել, այն դեպքում, երբ նրա առողջական վիճակը լավ չէ: Ղուկասյանի փաստաբան **Զարուհի Փոստանջյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով իր պաշտպանյալի առողջական վիճակին, նկատեց. «Երեկ, ժամը երեքի սահմաններում Վարդան Ղուկասյանի վիճակը վատացել է, ինչը տեսանելի է եղել քրեակատարողական հիմնարկի բուժաշխատակցի կողմից: Բուժաշխատողը, տեսնելով, որ վերջինիս վիճակը վատ է, առաջին բուժօգնություն է ցուցաբերել, պարզվել է, որ վերջինիս շաքարի մակարդակը կտրուկ բարձրացել է, եւ կրծքավանդակի շրջանում սուր ցավեր է ունեցել: Նա հայտնել է իր գանգատները, տեղի բուժակն իր նախաձեռնությամբ զանգահարել է շտապօգնություն: Շտապօգնությունը որոշում է կայացրել Ղուկասյանին տեղափոխել հիվանդանոց: Հիվանդանոցը որոշել է հոսպիտալացնել վերջինիս, ինչպես նաեւ նշանակել է կորոնարոգրաֆիա: Այն բժշկական լուրջ միջամտություն է, եւ նույնիսկ մարդուց պահանջվում է ստորագրություն (անոթների վիճակն են ստուգում՝ Հ. Գ.): Սովորական պրոցես չէ այն եւ կարող է հետեւանքներ ունենալ: Գիշերը կատարվեց այն, ապա նշեցին, որ առավոտյան կորոշեն, թե ինչ ընթացք է ունենալու պրոցեսը: Առավոտյան ժամը 8-ին, երբ դեռ բժիշկներն անգամ չէին եկել հերթափոխի, բազմաթիվ սեւազգեստ աշխատակիցներ վերջինիս տեղափոխել են քրեակատարողական, այնպիսի կայծակնային արագությամբ, որ ուղղակի ապշելու բան է: Քիչ առաջ եմ վերջինիս հանդիպել: Սննդակարգի հետ կապված սահմանափակումներ են մտցրել, սակայն գլուխը, ականջները ցավում են, խնդիրը կիսատ են թողել եւ միանգամից տարել քրեակատարողական: Եթե խնդիրը լուրջ չլիներ, շտապօգնություն չէին կանչի, շտապօգնությունն էլ իր հերթին հիվանդանոց չէր տեղափոխի վերջինիս: Այս ամենն արվեց, որպեսզի մարդը մնա հիվանդ եւ չբուժվի: Ես միայն այդպես եմ գնահատում, այլ կերպ չի կարող լինել: Այս քայլերին, այս անմարդկային գործողություններին ես չեմ կարողանում բացատրություն տալ: Սարսափ է ուղղակի: Գոնե 24 ժամ եւ ավել պարտավոր էին պահել մարդուն հիվանդանոցում: Ի՞նչն էր խնդիրը, որ այսպես են վարվում»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲՈՒՀ

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ ՄՈՌԱՑԵԼ ԵՆ ՌԵԿՏՈՐԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԷԼ ՉՈՒՆԵՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու վերջնաժամկետը նոյեմբերի 3-ն էր, մինչդեռ մրցույթն առայսօր չի հայտարարվել: Պոլիտեխնիկի ռեկտոր Գոռ Վարդանյանը, հիշեցնենք, ռեկտոր է ընտրվել է 2021թ. մարտի 3-ին, սակայն մրցակցի դատական հայցի պատճառով գործադիրը նրա նշանակումն արել է 2021թ. մայիսի 3-ին՝ 5 տարի ժամկետով, այսինքն՝ պաշտոնավարման ժամկետը, ըստ օրենքի, հաշվարկվում է կառավարության կողմից թեկնածուի հաստատումից հետո եւ կլրանա 2026-ի մայիսին:

Հոկտեմբերի 20-ին ուժի մեջ մտած «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» ՀՀ օրենքում նշվում է. «Ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ պակաս, քան վեց ամիս առաջ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով հայտարարվում է ռեկտորի ընտրություն՝ բաց միջազգային մրցույթի միջոցով: Նոր ռեկտորը ստանձնում է իր պարտականությունների կատարումը բուհի գործող ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտի օրը»: Եթե ռեկտորի պաշտոնավարման ժամկետի ավարտից՝ 2026թ. մայիսի 3-ից հետհաշվարկ կատարենք, կստացվի, որ մրցույթ հայտարարելու վերջին օրը նոյեմբերի 3-ն էր: Պոլիտեխնիկի պաշտոնական կայքում ռեկտորի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին որեւէ հայտարարություն չգտանք: Երկու օր է՝ փորձում ենք անձամբ Գոռ Վարդանյանից ճշտել՝ արդյոք մրցույթ հայտարարվե՞լ է, թե՞ ոչ, եւ եթե ոչ՝ ինչո՞ւ, կամ՝ ե՞րբ կհայտարարվի: Սակայն նա համառորեն չի պատասխանում մեր զանգերին եւ նամակներին: Պոլիտեխնիկական համալսարանի քաղաքային հասանելի հեռախոսահամարներով պաշտոնական մեկնաբանություն ստանալ եւս չհաջողվեց, ցավոք, հեռախոսազանգերն անպատասխան մնացին:

ԿԳՄՍ նախարարության հանրության հետ կապերի եւ լրատվության բաժնից խորհուրդ տվեցին տեղեկությունը ճշտել անմիջապես բուհից կամ դիմել Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե, որն այժմ բուհերի աշխատանքը համակարգողն է եւ անմիջական վերադասը: Հսկա նախարարությունում անգամ բուհերի գծով փոխնախարար չկա՝ Կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանն է ողջ գիտական ու բուհական համակարգը կառավարում: Կոմիտեից էլ հորդորեցին գրավոր հարցում ուղարկել: Սակայն մեզ հաջողվեց կապ հաստատել Պոլիտեխնիկի հոգաբարձուների խորհրդի անդամ, ԿԳՄՍ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանի** հետ: Մենք հետաքրքրվեցինք՝ ինչու չեն հետեւել օրենքի պահանջին ու ռեկտորի մրցույթ չեն հայտարարել, ինչին ի պատասխան նա ասաց, որ նոր օրենքով է սահմանվում ռեկտորի լիազորությունների ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ մրցույթ հայտարարելը:

«Նոր օրենքն ուժի մեջ մտնելու վեց ամսվա ժամկետը, ինձ թվում է, որ ուժի մեջ մտնելուց առաջ էր անցել: Այսինքն, պետք է հասկանանք, որ անցումային շրջան է, ու պետք է կարգավորումներ լուծել յուրահատուկ»,- ասաց Հայոցյանը: Ի՞նչ կարգավորումների մասին է խոսքը: Ասաց, որ դա նշանակում է, որ լուծումն իրավիճակային է լինում, մինչեւ որ այն ամբողջությամբ մտնում է ուժի մեջ: «Այս ամիսը, միեւնույն է՝ անցած էր, այսինքն, այն պահին, երբ օրենքը մտել էր»,- հավելեց Հայոցյանը: Մեր նկատառմանը, որ օրենքն ուժի մեջ է մտել հոկտեմբերի 20-ին, մինչեւ նոյեմբերի 3-ը կարող էին մրցույթ հայտարարել, ուստի ամեն դեպքում խախտում է տեղի ունեցել, նա արձագանքեց. «Ամեն դեպքում, խախտում չէ՝ ամեն դեպքում, անցումային շրջան է ստացվում»: Ի դեպ, օրենքն անցումային շրջան չի նախատեսում: Բայց հարցրինք՝ իսկ անցումային շրջանը երկա՞ր է տեւելու, թե՞ քայլեր արվում են: «Չէ, արդեն քայլեր արվում են»: Ս. Հայոցյանը նշեց նաեւ, որ մրցույթի մասին չի կարող ոչինչ ասել, քանի որ մրցույթը հայտարարում է հոգաբարձուների խորհուրդը, իսկ հիմա հոգաբարձուների խորհուրդը ձեւավորման փուլում է, քանի որ խորհրդի ժամկետն էլ էր լրացել: Բայց չկարողացավ հիշել, թե երբ է լրացել Պոլիտեխնիկի հոգաբարձուների խորհրդի լիազորությունների ժամկետը, փոխարենն առաջարկեց հարցում ուղարկել, որպեսզի ամիս-ամսաթվով նշի:

Համացանցային որոնմամբ մեզ պարզ դարձավ, որ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատվել էր վարչապետի 2020 թվականի օգոստոսի 7-ի որոշմամբ, լիազորությունները լրացել են 2025 թվականի օգոստոսի 7-ին: Այսինքն, շուրջ երեք ամիս է՝ բուհը հոգաբարձուների խորհուրդ անգամ չունի, այլ հարց է առաջանում, թե ինչպես է խորհուրդն իր գործունեությունը շարունակում, բուհն ինչպես է լուծելու հոգաբարձուների խորհրդի լիազորությունների դաշտում գտնվող հարցերը, չէ՞ որ հոգաբարձուների խորհուրդ չունենալն իրավական հետեւանք է առաջացնում հիմնադրամների համար: Սակայն Սարգիս Հայոցյանը հակված չէր պատասխանելու մեր հարցերին՝ հոգաբարձուների խորհրդի կազմ չձեւավորվելու հետեւանքների, ռեկտորի մրցույթ չհայտարարելով օրենքի խախտման մասին: Նա միայն նշեց, որ հոգաբարձուների խորհրդի նոր կազմում ինքը չի լինելու, քանի որ աշխատանքային ծանրաբեռնվածությունը թույլ չի տալիս:

Ստացվում է մի իրավիճակ, երբ Հայաստանի կարեւորագույն բուհերից մեկը շուրջ երեք ամիս է՝ մնացել է առանց կառավարման կարեւոր օղակի՝ հոգաբարձուների խորհրդի, խախտել է ընդունված օրենքը եւ ռեկտորի մրցույթ չի հայտարարել, եւ դա որեւէ մեկին չի հուզում: Նաեւ հայտնի չէ՝ որեւէ քայլ ձեռնարկվո՞ւմ է, այդ իրավիճակից ելք փնտրո՞ւմ են, թե՞ ոչ: Բուհը եւ ռեկտորը լռում են, հոգաբարձուների խորհուրդը լվացել է ձեռքերը, նախարարությունը եւ Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն էլ չեզոք դիտորդի դերում են:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԼԻՈՆՆԵՐ Է ՎՃԱՐՈՒՄ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցապծառայությունների նախկին աշխատակիցները, որոնց կրճատել էին 2021 թվականին Միասնական սոցիալական ծառայություն ստեղծելու կապակցությամբ, դիմել են դատարան եւ հիմնականում հաղթել են: Այս պահի դրությամբ, իհարկե, դեռ կան չավարտված դատական գործընթացներ, կան նաեւ չբավարարված հայցեր: Բայց դատարան դիմած աշխատողների մեծամասնության գործերով Վարչական դատարանն արձանագրել է «Քաղծառայության մասին օրենքի» եւ Աշխատանքային օրենսգրքի կոպիտ խախտումներ եւ բավարարել է հայցերը:

Ըստ օրենքի, քաղծառայողները պետք է շարունակեին աշխատանքը նորաստեղծ ՄՍԾ-ում, քանի որ սոցիալական ապահովության համակարգի վերաձեւումը պետության նախաձեռնությունն էր, եւ աշխատողները չպետք է տուժեին դրա արդյունքում: Օրենքը պահանջում է, որ նախկին աշխատողներն ունենան առավելություն՝ նախ նրանց պետք է առաջարկվեր զբաղեցնել նոր ստեղծվող աշխատատեղերը, իսկ եթե նրանք չհամաձայնեին, նոր պետք է մրցույթ հայտարարեին կամ նոր մարդկանց ընդունեին: Դրա փոխարեն քաղծառայողներին առաջարկել էին նոր մրցույթների մասնակցել՝ թափուր հաստիքների համար, որոնց կարգավիճակը նրանց նախորդ հաստիքից ցածր էր, եւ շատերը հրաժարվել էին մասնակցել այդ մրցույթներին: Արդյունքում շատ քաղծառայողներ զրկվել են աշխատանքից եւ օրենքով սահմանված երաշխիքներից:

Դատական գործընթացները տեւել են 3-4 տարի: Պետությունը, ի դեմս աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, ոչ մի կերպ չէր համակերպվում պարտության հետ եւ գնացել է մինչեւ Վճռաբեկ դատարան՝ բողոքարկելով վճիռները:

Որոշ բողոքներ դեռ վճռաբեկում են, որոշները Վճռաբեկ դատարանը մերժել է վարույթ ընդունել, որոշ բողոքներ էլ թողել է առանց քննության, ինչպես, օրինակ, Զբաղվածության պետական գործակալության աշխատակիցներ Գոհար Սոսախիկյանի դեպքում: Դատարան էին դիմել նաեւ Մանվել Նազարյանը, Կարեն Հովհաննիսյանը, Անահիտ Մարկոսյանը, Ցողիկ Բեժանյանը, Սամվել Բուդաղյանը, գրեթե բոլոր տարածքային սոցիալական ծառայությունների տնօրենները, որոնց ազատել էին աշխատանքից, ընդհանուր առմամբ՝ մոտ 4 տասնյակ աշխատող: Դատարանն անվավեր է ճանաչել նրանց աշխատանքից ազատելու որոշումը, պարտավորեցրել է վերականգնել աշխատանքում կամ վերականգնման անհնարինության դեպքում փոխհատուցում վճարել, ինչպես նաեւ՝ վճարել հարկադիր պարապուրդի համար:

Որքա՞ն է կազմելու միջին փոխհատուցումը 3-4 տարիների համար, ի՞նչ են ՀՀ հարկատուները վճարելու այս մարդկանց անօրինական հրամանների համար: Մեր տեղեկություններով, ոմանք, ապօրինի ազատման եւ պարապուրդի տարիների համար, մինչեւ 20 միլիոն դրամ են ստանալու:

Սպիտակի զբաղվածության ծառայության նախկին պետ **Գագիկ Ստեփանյանի** հայցն ընդդեմ նախարարության բավարարվել է անցյալ տարվա դեկտեմբերին: Նա դեռ սպասում է վճռաբեկի որոշմանը: «Այն ժամանակ մեր աշխատավարձը բարձր չէր: Կարծում եմ՝ մոտ 4-5 մլն դրամ պետք է ստանամ: Իմ ստաժը քիչ է եղել, եթե քաղծառայության ստաժը մեծ է, անհամեմատ ավելի մեծ փոխհատուցում կստանան»,- ասում է Գագիկ Ստեփանյանը: Ըստ նրա, մոտ 40-50 հայցվոր միայն տարածքային ծառայությունների աշխատող է եղել, նախկին «Փարոսից»: «Իմ մասով առաջին ատյանը որոշել է, որ պետք է փոխհատուցվի: Եղել են դեպքեր, երբ նախկին աշխատողները չեն շահել, օրինակ, Վեդիի սոցիալական ծառայությունից: Կան, որ մնացել են, աշխատում են: Օրինակ, Վանաձորի տնօրենը չի ազատվել, աշխատում է որպես մասնագետ»: Եթե ստեղծում են միասնական ծառայություն, բնականաբար, հաստիքներ են կրճատվում, Ձեր կարծիքով, ի՞նչ կարող էր անել պետությունը, որ բոլորին տեղավորեր աշխատանքի, դա հնարավո՞ր էր: «Չեմ կարող ասել: Դա միանգամից եղավ, եւ դա էր պատճառը, որ խնդիրներ առաջացան»: Կապվեցինք նաեւ Գոհար Սոխակյանի հետ, սակայն նա հրաժարվեց հարցերի պատասխանել՝ ասելով, որ նպատակահարմար չի գտնում իր ազատման մասին խոսել:

Այժմ նրանք բյուջեից ահռելի փոխհատուցումներ են ստանում այս 4 տարիներին չաշխատելու դիմաց, եւ այդ գումարները դուրս են գալու օրինապահ հարկատուների գրպանից: Մինչդեռ ապօրինի հրաման տվողները՝ ո՛չ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար Նարեկ Մկրտչյանը, ո՛չ Միասնական սոցիալական ծառայության պետ Էդուարդ Պետրոսյանը, ո՛չ նրան պաշտոնի նշանակող վարչապետ Նիկոլ Փաշինյանը, որը փաստացի իր «դաբրոն» է տվել այս ողջ ապօրինի գործընթացին, չեն պատժվելու:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՓՈՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅՏՆՎԵԼ Է 2 ԱՏՈՄԱՅԻՆ ՌՈՒՄԲԻ ՀԱՐՎԱԾԻՑ ՇՈՒԿԻ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԱԾ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈ՞ՒՄ

Մի՞թե Հայաստանի մեկ միլիոնանոց Կվանտունյան բանակը սովետական զինուժի կողմից Չինաստանում կապիտուլացվել է: Մի՞թե Հայաստանի նավատորմը ջախջախել են Միացյալ Նահանգների ռազմանավերը: Մի՞թե, Աստված չանի, Հայաստանի 2 քաղաքների վրա պատմության մեջ առաջին անգամ նետվել են այնպիսի ռումբեր, որոնց ցնցեցուցիչ հզորության ու մահաբերության մասին մինչ այդ աշխարհում ոչ ոք պատկերացում անգամ չուներ: Մի՞թե Հայաստանի ԱԳ նախարարը եւ Գլխավոր շտաբի պետը ամերիկյան ռազմանավի վրա ստորագրել են անվերապահ կապիտուլյացիայի մասին փաստաթուղթ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ է Հայաստանը ցանկանում որպես իր բանակի հայեցակարգ օգտագործել ապառազմականացմանը վերաբերող այն պարտավորվածությունը, որը 1945 թվականին պարտադրվել էր կապիտուլացված, 2 ատոմային ռումբերի հարվածներից շոկի մեջ հայտնված Ճապոնիային:

«Մենք ասում ենք՝ մեր բանակը ՀՀ միջազգայնորեն ճանաչված, ինքնիշխան տարածքից դուրս խնդիր չունի լուծելու»,- ասել է Նիկոլ Փաշինյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ «2026 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական քննարկման ժամանակ: Անմեղ թվացող այս հայտարարությունը կրկնօրինակն է այն դեմիլիտարիզացիայի պայմանի, որը 1945 թվականին պարտադրվել էր կապիտուլացված, 2 ատոմային ռումբերի հարվածներից շոկի մեջ հայտնված Ճապոնիային: Ըստ այդմ, Տոկիոն արտաքին ագրեսիային պատասխանելու իրավունք պետք է ունենար միայն այն դեպքում, երբ թշնամին արդեն իսկ հարձակվել է նրա վրա, ընդ որում, դա պետք է աներ միայն իր տարածքում: Այսօր, երբ աշխարհում իրավիճակը խիստ սրվել է, եւ Ճապոնիայի ղեկավարությունը Հյուսիսային Կորեայից ու Չինաստանից սպառնացող վտանգն ավելի բարձր է գնահատում, քան այն կար նույնիսկ «սառը պատերազմի» օրոք, Տոկիոն փոխել է իր ռազմական մարտավարությունը: Այսուհետ, երբ արդեն պարզ դառնա, որ ուր որ է՝ քեզ վրա հարձակվելու են, ճապոնացիները նախահարձակ կլինեն ու կիրականացնեն կանխարգելիչ հարված: Ընդ որում, դա կանեն սեփական տարածքից դուրս:

Ճապոնիան փոխել է իր ռազմավարությունը, ունենալով զուտ երեւակայական սպառնալիք՝ Հյուսիսային Կորեայի եւ Չինաստանի ռազմական հզորացումը: Մինչդեռ հյուսիսկորեական ու չինական զինվորականների եւ ճապոնացիների միջեւ զինված ընդհարումներ չկան եւ չեն եղել: Այդ նույն ժամանակ Հայաստանն անում է հակառակը՝ հրաժարվում է թշնամու տարածքին կանխարգելիչ հարված հասցնելու իրավունքից նույնիսկ այն պարագայում, երբ վերջիս զորքեր կուտակի ՀՀ սահմանին, եւ հայտնի դառնա, որ ուր որ է՝ պետք է հարձակվի մեզ վրա: Մինչդեռ, ի տարբերություն Ճապոնիայի, մեր հակառակորդը ոչ միայն արագ կերպով զինվում՝ հզորանում է, այլեւ 3 տասնամյակից ավելի տեւած ռազմական հակամարտության մեջ է գտնվում հայերի հետ: Ընդ որում, այդ հակամարտությունը վերջին մի քանի տարիների ընթացքում այնքան է թեժացել, որ նա հարձակվել եւ օկուպացրել է Հայաստանի ավելի քան 200 քառակուսի կիլոմետր տարածք:

Նիկոլ Փաշինյանի վերը նշված խոսույթը հակասում է ռազմական արվեստի աքսիոմներին, որոնց թվում նշվում է նախահարձակ լինելու, կանխարգելիչ հարված հասցնելու կարեւորության մասին: Մինչդեռ 2018-ին, երբ իր թեկնածությունն էր ներկայացրել վարչապետի պաշտոնին, Ազգային ժողովում նա հայտարարեց, որ եթե ստանձնի գլխավոր հրամանատարի պաշտոնը, կխորհրդակցի զինվորականների հետ:

Կա՛մ նրա խորհրդականների եւ ՀՀ բարձրաստիճան զինվորականների թվում չկան ռազմարվեստից տարրական գիտելիքներ ունեցողներ, կա՛մ էլ նախկինում «Դուխով» գրառումով գլխարկներ կրող այդ անձանց հայրենասիրությունն ավելի թույլ է, քան sms ստանալու վախը: Մինչդեռ հենց ինքը՝ Նիկոլ Փաշինյանը, նույն ելույթում վստահեցրել է, որ Հայաստանի բանակը ոչ միայն ջախջախված չէ, այլեւ, ընդհակառակը, նրա խոսքերով, «այսօր շատ մեծ տեմպերով զարգացնում ենք մեր բանակը»:

Եթե Թել Ավիվը հետեւեր նախահարձակ չլինելու, իր տարածքից դուրս կանխարգելիչ հարվածներ հասցնելու արգելքի ռազմավարությանը, Իսրայել պետությունն այսօր գոյություն չէր ունենա: Որովհետեւ պարտված կլիներ 1967 թվականի պատերազմում: Ինչպես գոյություն չունի Արցախի Հանրապետությունը, որը նախահարձակ չեղավ եւ կանխարգելիչ հարված չհասցրեց Ադրբեջանի զինուժին, երբ արդեն իսկ պարզ էր դարձել, որ ուր որ է՝ պետք է ենթարկվի հարձակման: Մեր եւ Իսրայելի հակառակորդներն այնպիսին են, որ պարտվել՝ նշանակում է ցեղասպանվել կամ, լավագույն դեպքում՝ տեղահանվել:

1967 թվականին Իսրայելից մի քանի անգամ շատ ծանր զինտեխնիկա, օդուժ, նավատորմ եւ տասնյակ անգամներ մեծաքանակ բանակներ ունեցող արաբական 5 պետություններ կուտակել էին զորքերն այդ երկրի սահմանների մոտ եւ խոստանում էին վերացնել Իսրայել պետությունն ու «հրեաներին նետել ծովը»: Թվում էր, թե ամեն ինչ վերջացած է: Բայց անխուսափելի դարձած այդ պատերազմի ելքը որոշեց Եգիպտոսի, Սիրիայի եւ Հորդանանի օդանավակայանների վրա կատարած իսրայելական ռազմական օդանավերի անսպասելի, կանխարգելիչ հարվածը, ինչի շնորհիվ ոչնչացվել էր հակառակորդի համարյա ողջ օդուժը: Դա էր պատճառը, որ այդ պատերազմը տեւեց ընդամենը 6 օր եւ ավարտվեց Իսրայելի լիակատար հաղթանակով:

Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍՈՒՄ Է ԱԿՏԻՎԱՆԱԼ «ՉԵԶՈՔ ՎՐԱՍՏԱՆԻ» ԳԱՂԱՓԱՐԸ

Օրեր առաջ հրապարակվեց Եվրամիության ընդլայնման ամենամյա զեկույցը, որտեղ անդրադարձ կար նաեւ Վրաստանին: Արձանագրված էր, որ Վրաստանի՝ ԵՄ անդամակցության գործընթացը փաստացի դադարեցված է 2024 թվականից, եւ երկիրը միայն ձեւականորեն է համարվում ԵՄ անդամության թեկնածու: «Եվրահանձնաժողովը եզրակացրել է, որ Վրաստանի անդամակցությունը ԵՄ-ին փաստացի կերպով դադարեցված է 24 թվականից: Դա արվել է Եվրոպայի խորհրդի 24 թ. դեկտեմբերին կայացրած որոշմամբ՝ հաշվի առնելով, որ Վրաստանը՝ որպես ԵՄ անդամության թեկնածու համարվող երկիր, ռեգրես է արձանագրել: Վրաստանը միայն անվանապես է շարունակում մնալ որպես ԵՄ անդամության թեկնածու»,- ասված է զեկույցում:

Բացի այդ, ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսն էլ հայտարարել էր, որ Բրյուսելը մտադիր է նոր վիզային մեխանիզմ սահմանել Վրաստանի համար՝ որպես ճնշման միջոց, որպեսզի ստիպի նրան վերադառնալ ԵՄ ինտեգրման ուղուն: Շատ վերլուծաբաններ ու փորձագետներ այն կարծիքին են, որ Վրաստանում տեղի են ունենում շրջադարձային փոփոխություններ, եւ Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրացիան շուտով կարող է պարզապես դառնալ վրաց ժողովրդի նորագույն պատմության հերթական փուլերից մեկը եւ անցնել պատմության գիրկը: Սակայն կարծում ենք, որ այն, ինչ տեղի է ունենում այսօր Վրաստանի եւ Եվրամիության միջեւ, ավելի շատ Վրաստանում այսօր իշխող քաղաքական մեծամասնության՝ «Վրացական երազանքի» ու ԵՄ ղեկավարների կոնֆլիկտն է ու ժամանակավոր բնույթ է կրում: Հատկապես՝ եթե ուշադիր լինենք, կնկատենք, որ Վրաստանում իշխանությունները, մեծ հաշվով, պահպանում են արեւմտամետ կեցվածքը, եւ դեռեւս որեւէ մեկը չի հայտարարել, որ Վրաստանը ցանկություն ունի անդամակցելու ԵԱՏՄ-ին կամ ՀԱՊԿ-ին կամ էլ հրաժարվում է ՆԱՏՕ-ի կամ ԵՄ-ի հետ գործակցությունից: Զուգահեռաբար, սակայն, ինչպես գրում է ռուս քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը, Վրաստանում աստիճանաբար սկսում է ավելի կիրառական դառնալ «չեզոք Վրաստանի» մասին թեզիսը: Ընդ որում, չեզոքության գաղափարները սկսել են քննարկման առարկա դառնալ նաեւ այդ երկրի հանրային քաղաքական դիսկուրսում:

Մարկեդոնովի կարծիքով, «Միասնական չեզոք Վրաստան» շարժումը սկսել է վերածվել լիարժեք կուսակցության: Առաջնորդ Վաթո Շաքարիշվիլին հայտարարել է, որ նոր ստեղծվող կուսակցությունը նախատեսում է մասնակցել 2028 թվականի խորհրդարանական ընտրություններին: Նա չի բացառել, որ մինչ այդ կկարողանան ունենալ անհրաժեշտ կառույցներ եւ կողմնակիցների քանակ, նաեւ՝ հստակ ծրագիր: Առայժմ «նեյտրալականները» դեռեւս խոսում են միայն այն մասին, որ պետք է որդեգրել աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական չեզոքություն ու հրաժարվել ԵՄ-ին ու ՆԱՏՕ-ին անդամակցությունից: Եվ ինչն է ամենակարեւորը՝ նեյտրալիտետի պարագայում միայն այս շարժման կողմնակիցները հնարավոր են համարում Հարավային Օսիայի եւ Աբխազիայի հետ վերամիավորումը: Միաժամանակ նաեւ հայտարարում են, որ այն պահից սկսած, երբ Վրաստանը կորցրեց իր չեզոքությունն ու միակողմանի կերպով սկսեց փնտրել եվրաատլանտյան ինտեգրացման ուղիները, կոնֆլիկտ առաջացավ Ռուսաստանի հետ, ինչն էլ բերեց այն տխուր հետեւանքներին, որոնք այժմ էլ շարունակում են ակտուալ մնալ Վրաստանի համար:

Ռազմաքաղաքական ու աշխարհաքաղաքական չեզոքության գաղափարը Վրաստանում նոր չէ: 2008 թվականին, օրինակ, այն ժամանակվա նախագահական ընտրություններում առաջադրված միակ կին թեկնածու Իրինա Սարիշվիլին առաջարկում էր անցկացնել համազգային հանրաքվե՝ Վրաստանի չեզոքության որդեգրման հարցով: Սակայն Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլու կողմից անցկացվեց Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցության հանրաքվե: Այն ժամանակ այդ գաղափարին կողմնակից էր Վրաստանի բնակչության մեծ մասը, իսկ այժմ իրավիճակը փոխվել է: Վրաստանի՝ նեյտրալ պետություն դառնալու անհրաժեշտության մասին խոսել են նաեւ «Հայրենասերների ալյանս» կուսակցությունից, մասնավորապես՝ Դավիթ Թարխան-Մոուրավին: Սա արդեն քաղաքական մի ուժ է, որը թեեւ փոքրաթիվ է, բայց ունի իր խորհրդարանական ֆրակցիան: Մարկեդոնովը լավատես է: Նա կարծում է, որ հնարավոր է, որ Վաթո Շաքարիշվիլու մոտ ստացվի: Ու այդ դեպքում, վրացական գործող քաղաքական իշխանությունն այն կօգտագործի երկրի ներքաղաքական կյանքում բալանսավորումն ապահովելու համար: Սակայն հարց է, թե արդյոք կուսակցության ստեղծումից կամ որոշակի թվով կողմնակիցներ ունենալուց, կուսակցական կառույցներ եւ այլ ատրիբուտներ ձեւավորելուց ու ստեղծելուց այն կողմ, «գետնի վրա» հնարավոր կլինի՞ նեյտրալիտետի գաղափարը դարձնել վրացական հասարակության մեծ մասի համար ընդունելի գաղափար: Դրա համար թերեւս անհրաժեշտ կլինեն ավելի խոր փոփոխություններ վրացական հասարակության հանրային-քաղաքական գիտակցության մեջ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽ

ՓԱԽՈՒՍՏ «ԱՆՋԱՏՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ»-ԻՑ

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԽ պատգամավոր (1990-95թթ).
ՀՀ ԱԺ պատգամավոր (1995-99թթ.)
ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

ԻՆՉ ԷՐ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հինգ տարի առաջ Հայաստանի վարչապետը, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահները ստորագրեցին Եռակողմ հայտարարություն, որը կանգնեցրեց Երկրորդ ղարաբաղյան պատերազմը:

Ռազմավարական առումով այն հիմնովին վերանայեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման տրամաբանությունը՝ տեղափոխելով շեշտադրումը ԼՂ կարգավիճակից (ինչը հանդիսանում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո գրեթե երեք տասնամյակ ընթացող բանակցությունների էությունը) դեպի տարածաշրջանային կայունացում եւ անվտանգություն, փախստականների վերադարձ, պահվող անձանց եւ զոհվածների մարմինների փոխանակում, ինչպես նաեւ «տարածաշրջանի բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակում»: Այսպիսով, եթե ԼՂ հակամարտության լուծման «դասական» պարադիգմը նախատեսում էր Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացում, ապա նոյեմբերյան փաստաթուղթը չէր պարունակում որեւէ դրույթ չճանաչված հանրապետության ապագա կարգավիճակի որոշման վերաբերյալ: ՌԴ նախագահ Վ. Պուտինի մտահղացմամբ այդ հարցի քննարկումը հետաձգվում էր ավելի բարենպաստ ժամանակների:

Մարտավարական առումով ռուսական նախաձեռնության շնորհիվ դադարեցին լայնածավալ ռազմական գործողությունները, որոնց ընթացքը վտանգում էր ամբողջ Արցախի գոյությունը: Զինադադարի արդյունքում հաստատվեց Ադրբեջանի համար ավելի բարենպաստ ստատուս քվո: Չնայած դրան, հայտարարությամբ նախատեսված դրույթների իրագործումն ամբողջությամբ չէր զրկում արցախցիներին իրենց հայրենիքում ապրելու իրավունքից: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Բաքվի համար Երկրորդ ղարաբաղյան պատերազմի սկզբնական նպատակը «գրավյալ տարածքների» վերադարձն էր: Սրա ապացույցն է այն, որ նոյեմբերի 9/10-ին Ալիեւը համաձայնեց ԼՂ հակամարտության գոտում ամբողջական հրադադարի եւ բոլոր ռազմական գործողությունների դադարեցման, տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակման եւ ռուսական խաղաղապահ զորակազմի տեղակայման: Այս կոնտեքստում պետք է դիտարկվի նաեւ Վ. Պուտինի կողմից դեռ 2020թ. հոկտեմբերի 19-ին արված զինադադարի առաջին առաջարկը, որը Հայաստանի գլխավոր բանակցողը մերժեց՝ «դավաճանության մեղադրանքից» խուսափելու նպատակով: Նոյեմբերի 9/10-ի հայտարարության ստորագրումից հետո պաշտոնական Երեւանի ծայրահեղ պոպուլիստական հռետորաբանությունը դրդեց Ալիեւին՝ հիմնովին վերանայելու իր ռազմավարությունը:

ԴԺՈԽՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՍԱԼԱՐԿՎԱԾ Է ԲԱՐԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

2021թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախօրեին հանրությանը հրամցված նախընտրական ծրագրով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ցանկացավ համադրել երկու իրարամերժ գաղափարներ: Հռչակելով ԼՂ սառեցված հակամարտության լուծման նպատակով «անջատում հանուն փրկության» (remedial secession) սկզբունքը՝ կառավարող կուսակցությունը վերահաստատեց միաժամանակ Հայաստանի հավատարմությունը Եռակողմ հայտարարությանը:

Գիտակցելով, ամենայն հավանականությամբ, նման գաղափարի անիրատեսությունը՝ 2021թ. օգոստոսին հաստատված ծրագրով ՔՊ-ի նոր կառավարությունը սահմանեց, որ «Ղարաբաղյան հիմնախնդրի վերջնական կարգավորումը տեսնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցմամբ՝ հայտնի սկզբունքների եւ տարրերի, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա»: Խնդիրը միայն այն չէր, որ կառավարության ծրագիրը հակասում էր Եռակողմ հայտարարության տրամաբանությանը: Հայաստանի կառավարության կողմից ԼՂ ինքնորոշման իրավունքի վերահաստատումը փաստացի փորձ էր՝ միակողմանի վերանայել Եռակողմ հայտարարության էությունը, ինչը լրջագույն ռազմավարական հակասություններ առաջացրեց Երեւանի, Բաքվի եւ Մոսկվայի միջեւ: Որպես հետեւանք, Ադրբեջանը 2023թ. սեպտեմբերին ներխուժեց Հայաստանի ինքնիշխան տարածք՝ ամրանալով Սյունիքի եւ Գեղարքունիքի որոշ հատվածներում: Բաքվի նման արձագանքը միանգամայն կանխատեսելի էր եւ ամբողջությամբ համապատասխանում էր այն տրամաբանությանը, որով այդ երկիրն ավանդաբար գործել է, երբ դժգոհ է եղել բանակցությունների ընթացքից:

Պաշտոնական Երեւանի դիրքորոշման բացահայտ երկփեղկվածությունը ԼՂ հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ խնդրահարույց էր նաեւ ՌԴ-ի համար: Կրեմլը կարող էր ենթադրել, որ Հայաստանը ձգտում է առավելագույնս «կապիտալիզացնել» ռուսական խաղաղապահների ներկայությունը, այն է՝ ամբողջությամբ արտապատվիրակել ԼՂ անվտանգության ապահովումը ռուսական կողմին՝ ողջ պատասխանատվությունը բարդելով վերջինիս վրա: Միաժամանակ, հայ «ստրատեգների» հաշվարկներով, Հայաստանի հանդեպ ադրբեջանական հնարավոր ագրեսիայի դեպքում Երեւանը պետք է ստանար ՌԴ-ի եւ ՀԱՊԿ-ի աջակցությունը: Դե՛հ, իսկ եթե այս հաշվարկները չարդարացվեն, ապա մեղքը կբարդվի դաշնակիցների վրա: Այդ ոգով Երեւանից հնչող մեղադրանքները չուշացան: Նոր տարածքային կորուստներից խուսափելու նպատակով՝ հոկտեմբերի 6-ին Պրահայում Հայաստանի գլխավոր բանակցողը ճանաչեց Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի ինքնիշխան տարածք: Մնացածը ժամանակի հարց էր. Բաքուն իրագործեց իր ամենանենգ մտադրությունը՝ ԼՂ-ի հայաթափումը: Դիվանագիտությանը մնաց միայն ձեւակերպել ու ամրագրել ռազմական գործողությունների եւ Պրահայում կայացած «բանակցությունների» արդյունքները:

«Լուծելով» Արցախի հիմնախնդիրը՝ Բաքուն ձեռնամուխ եղավ բացառապես իր համար շահեկան պայմաններով Հայաստանին «խաղաղություն» հարկադրելու գործին: Այսպես, Թուրքիայի լռելյայն աջակցությամբ Ադրբեջանը վերջնագիր ներկայացրեց՝ վերանայելու Հայաստանի Սահմանադրությունը եւ պետական խորհրդանիշները: 2025թ. օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ստորագրված փաստաթղթերով «թաղվեց» ԵԱՀԿ Մինսկի խումբը, տորպեդահարվեց նաեւ Եռակողմ հայտարարության 9-րդ կետը, եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հռչակվեց խաղաղություն՝ անտեսելով Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի որոշ հատվածների օկուպացիայի փաստը: Համաձայնելով Բաքվի եւ Անկարայի բոլոր պահանջներին՝ հայ բանակցողները ոչ միայն չեղարկեցին Եռակողմ հայտարարությունը, այլեւ մոռացության մատնեցին իրենց իսկ նախընտրական խոստումներն ու ծրագրային պարտավորությունները:

ԴՈԿՏՐԻՆԱԼ ՊԱՏՐԱՆՔ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԹԱԿԱՐԴ

Ինչպես ցույց է տալիս միջազգային բանակցությունների պրակտիկան, եթե պարտվող կողմը միակողմանիորեն հռչակում է բացարձակապես անընդունելի նպատակ, ապա դա կդրդի հաղթող կողմին՝ բացառել դրա քննարկման հնարավորությունն իսկ: Հենց սա տեղի ունեցավ 2021-23թթ. հայ-ադրբեջանական բանակցություններում: Հայաստանի կողմից Եռակողմ հայտարարության տրամաբանության միակողմանի վերանայման փորձը պատեհ առիթ հանդիսացավ Ալիեւի համար՝ կտրելու ղարաբաղյան հիմնախնդրի «գորդյան հանգույցը»: Հայ բանակցողները միայն իրենց հայտնի պատճառներով արհամարհեցին այն հանգամանքը, որ Եռակողմ հայտարարությամբ պայմանավորված անվտանգության փխրուն ճարտարապետությունը պահանջում է նախեւառաջ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման բարձր կարգապահություն եւ «կարմիր գծերի» ճանաչում: Կառավարող կուսակցության դոկտրինալ փաստաթղթերը դարձան ոչ միայն ՀՀ քաղաքացիների համար գայթակղիչ նախընտրական խայծ, այլեւ հրավեր հակառակորդին՝ ռազմական ուժի եւ ուժի սպառնալիքի գործադրմամբ լուծելու ղարաբաղյան հակամարտությունը ու առաջ մղելու թուրք-ադրբեջանական միության ռազմավարական այլ նպատակներ:

Ձեռք բերված պայմանավորվածությունները միակողմանի վերանայելու պարտված կամ թույլ կողմի փորձը, առավել եւս՝ նոր էսկալացիայի կանխման մեխանիզմների եւ անվտանգության երաշխիքների բացակայությամբ, կաթվածահար է անում դիվանագիտությունը, հանգեցնում ռազմական գործողությունների վերսկսմանը եւ կտրուկ փոխում ուժերի հավասարակշռությունը: Դրա ցայտուն վկայությունն է 2022թ. սեպտեմբերին Մինսկի գործընթացից Ուկրաինայի դուրս գալը, ինչի արդյունքում ռուս-ուկրաինական հիբրիդային հակամարտությունը վերածվեց լայնածավալ եւ երկարատեւ պատերազմի:

ՀՆԱՐԱՎՈՐ, ԲԱՅՑ ԱՆՏԵՂԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոմանք այլ կերպ կմեկնաբանեն իրադարձությունները: Կասեն՝ Բաքուն ի սկզբանե հետապնդում էր առավելապաշտական նպատակներ, ուստի Երեւանի վարքագիծը որեւէ ազդեցություն չէր կարող ունենալ դեպքերի ընթացքի վրա: Նման մեկնաբանությունն անտեսում է Ալիեւի կողմից Եռակողմ հայտարարությանը միանալու փաստը: Հնարավոր է, որ վկայակոչեն ԵԱՀԿ ՄԽ ձեւաչափի էրոզիան եւ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության նվազման հետեւանքները՝ ասելով, որ նման պայմաններում հակամարտության ելքը կանխորոշված էր: Այո, այս գործոններն առկա էին: Սակայն հենց դրանց առկայությունն էր պահանջում, որպեսզի Եռակողմ հայտարարության ստորագրումից հետո Հայաստանի արտաքին քաղաքականության ճարտարապետներն ամենայն լրջությամբ վերաբերվեն պաշտոնական Երեւանից արձակվող «թանկարժեք ազդանշաններին» (costly signals): Միտումնավոր, թե անգիտակցաբար՝ դա չարվեց, եւ ազգային աղետը դարձավ անխուսափելի:

ԲԱՆՏՈՒՄ «ԲԱԼԱՆՍԸ» ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆՎԻ

Հայաստանում բուռն կյանք կա միայն քրեահիրավական ոլորտում՝ օրական մի քանի մարդ են ձերբակալում, մի քանիսին կալանք տալիս, մի քանիսին մեղադրանք առաջադրում կամ բանտային կալանքը փոխարինում տնային կալանքով: Երեկ էլ օրը բուռն էր՝ իրադարձություններով լի: Վաղ առավոտյան տեղեկացանք, որ ՊԵԿ նախկին նախագահ, «Գազպրոմ Արմենիա» ընկերության նախկին տնօրեն Վարդան Հարությունյանի կալանքը փոխարինվել է տնային կալանքով: Տնային կալանք սահմանվեց նաեւ Արագածոտնի դիվանապետ Տեր Գարեգինի նկատմամբ: Բայց քանի որ Նիկոլ Փաշինյանը որոշել է բանտերում գտնվողների բալանսը պահել՝ երեկ ձերբակալվեց էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանը, որին մի անգամ արդեն մեղադրանք էին առաջադրել: Այս անգամ ասվեց, որ մեղադրանքը կապ չունի նախարարի պաշտոնավարման շրջանի գործունեության հետ, եւ Քննչական կոմիտեն հայտնեց, որ բացահայտել է «հանցավոր կազմակերպության կողմից 2008-2014 թվականներին կատարված կոռուպցիոն դեպք»՝ հողերի եւ վարկերի հետ կապված, որին մասնակից են եղել Կադաստրի աշխատողներ: Թե ինչ կապ ուներ Քերոբյանը դրա հետ, չասվեց: Տեղեկացանք նաեւ, որ Բարձրագույն դատական խորհուրդը Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու թույլտվություն է տվել եւ նրա գործունեությունը կասեցրել: Նաիրա Գրիգորյանը գեներալ Մանվելի դուստրն է: Գեներալի մյուս դուստրն ու կինն ակտիվորեն մասնակցում են Վաղարշապատի ՏԻՄ ընտրություններին:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵԿԱՅԻ 36 ԲԱՐԴԻՆ

Գյուղի մուտքի մոտ Արփին ասաց.

- Հող ու ջուր, ցորենի սերմացու ենք տանելու՝ Օշականի հողում ցանելու:

Վարդը, որ նվագում ու շարականներ էր երգում Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ասաց.

- Ցորենը Օշականում աճեցնելու ենք, Թարգմանչաց տոնի օրը 36 լավաշ ենք թխելու եւ բաժանելու ենք մարդկանց:

Մեքենան դանդաղ էր ընթանում:

Մշո առասպելական դաշտն իր ողջ հմայքով տարածվել էր բաց երկնքի տակ: Ինքնաթիռները, մեկը մյուսին հաջորդելով, վայրէջք էին կատարում մոտակայքում գտնվող օդանավակայանում:

Դաշտը կարծես մի անծայրածիր օդանավակայան էր, որի ցանկացած հատվածում ցանկացած մակնիշի օդանավ կարող էր վայրէջք կատարել:

Մի մարդատար մեքենա արգելակեց նորեկներիս մեքենայի կողքին: Վարորդը շիկահեր, կապույտ աչքերով մի երիտասարդ էր: Հետեւի նստարանին նստած երկու մանկահասակ երեխաները եւս շիկահեր ու կապուտաչ էին:

- Դե եկ ու սրանց ասա՛, որ հայեր չեն,- ասաց օշականցի Տիգրանը, ով ուզած պահին բնորոշ մի հումոր կարող էր անել, սակայն Հացեկաց հասնելիս լռել էր, տխրել, եւ Աստված գիտե, թե ինչ մտորումների մեջ էր:

- Ովքե՞ր եք,- հարցրեց շիկահերը:

- Հայեր ենք, զբոսաշրջիկներ,- պատասխանեց Գեւորգը:

- Որտե՞ղից եք եկել,- շփոթված հարցրեց շիկահերը:

- Հայաստանից,- պատասխանեց Գեւորգը:

- Դա որտե՞ղ է,- հարցրեց շիկահերը:

- Առաջ այստեղ էր, շուտով էլի այստեղ կլինի,- ցասումն ու հուզմունքը չզսպելով, հայերեն պատասխանեց ռեժիսոր Արտակը:

Շիկահերը մի քանի քայլ հեռացավ մեքենայից, հեռախոսով ինչ-որ մեկի հետ խոսեց եւ անմիջապես մոտեցավ մեր մեքենային:

- Եկեք իմ հետեւից,- ժպտալով դիմեց Գեւորգին եւ նստեց իր մեքենան:

Գյուղում արդեն հավաքվել էին մեծ ու փոքր բազմաթիվ մարդիկ եւ հետաքրքրությամբ նայում էին մեզ: Մենք սկսեցինք հարցուփորձ անել, շրջել գյուղի բոլոր փողոցներով, որեւէ մասունք գտնել, որեւէ առարկա, իր, որեւէ հայերեն արձանագրություն, Սուրբ Մաշտոց եկեղեցուց որեւէ քար ու խիճ: Ապարդյուն:

Երբ հուսահատ, գյուղով մեկ ցրիվ եկած մեր խումբը հավաքվեց, մեկը մոտեցավ, ներկայացավ որպես գյուղապետ ու սկսեց հարցերի տարափը. ովքե՞ր եք, ինչո՞ւ եք եկել, ի՞նչ եք փնտրում այս կողմերում:

- Զբոսաշրջիկներ ենք,- ասաց Գեւորգը:

- Ի՞նչ եք փնտրում,-արդեն բարեհամբույրից խիստ տոնի անցած՝ հարցրեց գյուղապետը:

- Մեր ընկերոջ պապերն այս գյուղում են ապրել հարյուր տարի առաջ,- ասաց օպերատոր Բորիսը՝ մատնացույց անելով ինձ:

- Բարեկամներ ունե՞ս այս կողմերում,- հարցրեց գյուղապետը:

Ինչպե՞ս ասեի, որ բոլոր բարեկամներիս այս կողմերում կոտորել են, որ միայն պապիս է հաջողվել փախչել՝ իր կույր տատի շնորհիվ:

- Չունեմ,- ասացի:

- Ոչ մի գյուղո՞ւմ:

- Ոչ մի գյուղում,- պատասխանեցի:

- Չեմ հավատում,- շպրտեց գյուղապետը:

- Չեմ հավատում, որ դու գյուղապետն ես,- ասաց Արփին:

Գյուղապետը քթի տակ մտմտաց, գրպանից հանեց հեռախոսը, առանձնացավ եւ զանգահարեց ինչ-որ մեկի:

Քիչ հետո մոտեցավ մեզ եւ ասաց.

- Զինվորականների եմ զանգել, նրանք հրամայեցին, որ չգնաք, մինչեւ իրենց գալը:

Սկզբում թվաց, թե գյուղապետը կատակ է անում, սակայն երբ մենք փորձեցինք մոտենալ մեքենային, նա նորից կրկնեց, որ հրամայված է գյուղը չլքել: Հետո դարձավ բազմությանը, իր լեզվով ինչ-որ բան ասաց: Բազմության մի մասը հեռու քաշվեց, մի մասը խառնվեց մեզ: Չգիտես որտեղից՝ բազմության միջով, մեր կողքով մի աղջնակ քամու պես սուրալով անցավ՝ աջ ձեռքը գորշ գայլերի խորհրդանիշ դարձրած թափահարելով մեր ուղղությամբ:

Քիչ հետո մեզ մոտեցավ զինվորական մեքենան: Երեք հաղթանդամ զինվորականներ իջան եւ սկսեցին մեզ հարցաքննել. ովքե՞ր եք, ինչո՞ւ եք եկել, ի՞նչ եք որոնում: Նույն պատասխանները ստանալով՝ նրանք սկսեցին խուզարկել մեր մեքենան: Երբ ավարտեցին, նրանցից ավագը հարցրեց.

Իսկ որտե՞ղ եք թաքցրել ձեր բահերը: Չէ՞ որ դուք եկել եք ձեր պապերի թաքցրած ոսկիները որոնելու:

Ինչպե՞ս բացատրեինք սրանց, որ մենք եկել ենք ոսկուց էլ ավելի թանկ բան որոնելու, ինչպե՞ս ասեինք, որ մեր տակնուվրա արած գյուղը, որտեղ հեղեղի պես մի օր թափվել են աշխարհում իր նմանը չունեցող գանձերը, հիմա դրանցից այստեղ ոչ մի փշրանք չի մնացել:

Երբ տեսան, որ բահեր չունենք, որ այստեղ ենք հայտնվել ոչ մի օրենք չխախտելով, հրավիրեցին թեյի:

- Այս բարդիների պուրակը գուցե այն ժամանակ էլ է եղել,-հուզմունքը թաքցնելով՝ ասաց Արմինեն, երբ գյուղապետը թեյ ու քաղցրավենիք էր մատուցում մեզ ու զինվորականներին:

- Քեզ ո՞վ ասաց, որ ծախես ու հիմա ստիպված թեյ ու քացրավենիք մատուցես,- ասաց Տիգրանը:

Գյուղի կենտրոնում հարսանիք էր: Բարձր երաժշտությունը ողողել էր բարդիների պուրակը: Վարդը մոտեցավ Շիկահերին, բռնեց նրա ձեռքը եւ հասկացրեց, որ պիտի պարեն: Պարում էին Վարդն ու շիկահեր տղան: Շիկահերի կապուտաչ տղեկներն սկսեցին ծափ տալ: Բոլորը ծափահարում էին: Երբ ես ափերս բացեցի ու փորձեցի ծափ տալ, հանկարծ տեսա, որ պարողը Վարդը չէ, պարողը մորական տատս է, որ Վարդի տարիքին է եղել ու փեշի տակ երեք հարյուր տարեկան ավետարան ունի պահած, որ իր նախապապերը փոխանցել են հոգեւորականից հոգեւորական: Տեսա, որ Շիկահերը, որի երկու կապուտաչ մանչերը ոգեւորված ծափ էին տալիս, պապիս տարիքի մանուկ է, տեսա, թե ինչպես է Վարդի ճկույթից արյունը հոսում դեպի Շիկահերի ճկույթը, Շիկահերի ճկույթից՝ Վարդի ճկույթը: Տեսա, թե ինչպես են փուշ ու մացառների, քարերի միջով կույր նախատատս ու պապս փախչում, երբ ենիչերին շրջապատեց նրանց, երբ թիրախ դարձրեց ու սկսեց կրակել: Մեկ, երկու, երեք: Ոչ մի զենք չէր կրակում: Դիվային բան կա այստեղ. մտածել են ենիչերիներն ու թիրախներին թողած, հեռացել: Հետո ավետարանը, որ քարերի մեջ թաքցրել էր կույր նախատատս, երբ հասել էին խմբին, ասել էր տեղը, ասել էր, որ գնան բերեն: Գնացել, չեն բերել, բայց դրանից հիսուն տարի հետո այն հայտնվել էր ինչ-որ տեղ, ինչ-որ մեկի խորը-խորը թաքստոցում: Իսկ ինչ-որ մեկն այն դարձրել է ապարդյուն փնտրվող իր, առարկա, որ մենք փնտրեցինք ու չգտանք Հացեկացում:

Իսկ Վարդը Շիկահերի հետ շարունակում էր պարել: Պարում էր հպարտ, գլուխը բարձր, ոտքերը պինդ խփելով հողին, Հացեկացի հողին, որի ցորենը պիտի հաց դառնա Օշականի հողի մեջ. 36 ոսկեգույն, բարակ, անմահական լավաշ, որ Արփիի հետ Թարգմանչաց տոնին բաժանեն, բաժանեն, ու չպրծնի: Պարում էր Վարդը՝ Շիկահերի ճկույթը պինդ բռնած, արյան հոսքերով նույնը, սրտի զարկերով նույնը, շնչառությամբ նույնը, ճկույթն օդի մեջ խաղացնելով, ցնցելով: Չէ՞որ գյուղում հարսանիք էր, երաժշտությունը՝ բարձր, եւ սայլերը անիվների ճռինչով մոտենում էին գյուղին: Եվ գյուղը ցնծությամբ պարում էր: Բոլորը Վարդ էին, բոլորը

Շիկահեր էին: Եվ շողում էր Մաշտոցի ճկույթը սայլերից մեկի վրա: Ճկույթը, որ պիտի հանգրվաներ Հացեկացի հողում: Հանկարծ երաժշտությունը կտրվեց: Սայլի՝ բարդու փայտից շինված անիվը խափանվել էր: Սայլապանը տաշում էր: Տաշեղները հանգրվանում էին Հացեկացի առասպելական հողին, եւ հողից 36 բարդի դուրս ելան:

Վարդն ու Շիկահերը պարում էին բարդիների պուրակում, երաժշտությունը բարձր էր, շատ բարձր: Շիկահերի կապուտաչ տղեկները ծափերով ողողել էին այգին: Արյունն անտես անոթներով անցնում էր ճկույթից ճկույթ: Վարդը հպարտ էր պարում, գլուխը բարձր, ոտքերը պինդ խփելով հողին: Բարդիներն առանց քամու խոնարհվում էին ու բարձրանում: 36 բարդի Հացեկացում, 36 ոսկեգույն, բարակ, բուրավետ լավաշ Օշականում բաժանում էին, բաժանում՝ չէր վերջանում:

Նորայր ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հացեկաց-Երեւան
11.09.2025թ.

ՆՈՐ ՄԵԳԱ ԿԻՆՈՆԱԽԱԳԻԾ՝ ԱՆԴՐԵՅ ԿՈՆՉԱԼՈՎՍԿՈՒ ԿՈՂՄԻՑ

Այս տարվա հոկտեմբերին թողարկվեց Անդրեյ Կոնչալովսկու նոր մեգա կինոնախագիծը՝ «Ռուսական հեղափոխության ժամանակագրությունը» սերիալը, որը նաեւ անվանում են կինովեպ: Սերիալը 16 մասից է: Ռուսական հեղափոխության պատմությունը մինչ այսօր էլ շարունակում է մնալ համաշխարհային պատմության ամենահետաքրքիր դրվագներից մեկը, որի մասին դեռ կգրվեն ու կնկարահանվեն գրքեր ու կինոնկարներ: Սերիալի ռեժիսորն ու սցենարի հեղինակը Անդրեյ Կոնչալովսկին է: Գլխավոր դերում Յուրի Բորիսովն է: Նա մարմնավորել է երիտասարդ ոստիկանի՝ սպայի կերպարը, որը պետք է բացահայտի ռուսական միապետության դեմ հյուսված դավադրության սարդոստայնը եւ քանդի այն: Հերոսը հայտնվում է իրադարձությունների կենտրոնում: Սերիալում 150 պատմական դեմքեր կան, այդ թվում՝ Լենին, Ռասպուտին, տերտեր Գապոն, Տրոցկի, Ստալին, Գորկի եւ Բլոկ, Քշեշինսկայա, Եսենին, Մայակովսկի եւ այլք: Դերասաններին ընտրել են ոչ միայն արտաքին նմանությամբ, այլ նաեւ՝ տեմպերամենտի համընկնումով, իրական նախատիպերին համապատասխանությամբ: «Դա ֆիլմ է, որով փորձ է արվում հասկանալ Ռուսաստանը, նրա պատմությունը, նրանց, ովքեր եղել են հեղափոխության շարժիչ ուժը, նրանց, որոնց սրբել-տարել է այդ հեղափոխությունը: Եվ մեկը, եւ մյուսը սխալ լինելու իրավունք ունեն: Ինձ համար շատ կարեւոր էր, որ պատմական անձերն այս ժապավենում էմոցիոնալ արձագանք առաջացնեին: Ոչ թե կայսրը կամ Լենինը, այլ պարզ մարդիկ՝ իրենց թուլություններով, հավակնություններով, հույսերով ու կրքերով: Դա հեշտ բան չէ, քանի որ կան կարծրատիպեր, արխետիպեր, շաբլոններ»,- ասել է Կոնչալովսկին: Սերիալում գործողությունները տեղի են ունենում 1909-24 թթ.՝ Ռուսաստանի պատմության բախտորոշ փուլերից մեկում: Սցենարը գրվել է վավերագրության հիման վրա: Յուրաքանչյուր կերպարի մասով հավաքվել է մի ամբողջ դոսյե՝ լուսանկարներ, նկարագրություններ, բնութագրեր եւ այլն՝ պատմական աղբյուրներից, կինոժամանակագրությունից: Սերիալն արդեն արժանացել է թե՛ դրական, թե՛ քննադատական արձագանքների: Շատ մասնագետներ կարծում են, որ

դա պատմության գեղարվեստական կինոմեկնաբանությունն է եւ կապ չունի վավերագրական պատմության հետ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԵՐԲ ՈՂՋ ՌԵՍՈՒՐՍԸ ԳՆՈՒՄ Է ՊԱՐԶԵԼՈՒՆ, ԹԵ ՈՎ ՈՒՄ ՀԵՏ Է ԿԵՆԱԿՑՈՒՄ, ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎԻ

Հայաստանում ազգությամբ չեչեն Այշատ Բայմուրադովայի սպանության գործը, որը մեծ աղմուկ բարձրացրեց եւ ցույց տվեց, որ Հայաստանում ոչ ոք պաշտպանված չէ՝ անգամ ժամանակավորապես բնակվողները, եւ կարելի է դրսից գալ՝ անարգել մարդ սպանել ու հեռանալ, ցավոտ իրողություններ բացահայտեց: Այդ սպանության հետքերով բազմաթիվ լրատվամիջոցներ հրապարակումներ արեցին, այդ թվում՝ «Դոժդը», հղում անելով «Օստորոժնո Նովոստի» կայքին, որն էլ իր հերթին հղում էր անում մահացածի հարազատներին եւ տեղեկացնում, որ որպես մեղադրյալ կարող է ներգրավված լինել 30-ամյա Սաիդ-Խամզատ Բայսարովը, որը նախկինում դատապարտվել էր «Իսլամական պետությանը» ֆինանսավորելու համար: 30-ամյա տղամարդը դուրս է եկել այն բնակարանից, որտեղ հայտնաբերվել էր Այշատ Բայմուրադովայի մարմինը՝ նրա սպանության օրը: 2018 թվականին Սաիդ-Խամզատ Բայսարովը մեղադրվել էր «Իսլամական պետությանը» ֆինանսավորելու մեջ, սակայն Մոսկվայի դատարանը կարճել էր գործը: Բայսարովի դեմ քրեական գործեր կային նաեւ ալկոհոլի ազդեցության տակ մեքենա վարելու եւ կողոպուտի համար: Նրա հայրը գործարար է՝ Գրոզնիում: «Օստորոժնո Նովոստի»-ի տվյալներով՝ Հայաստանի ոստիկանությունը Բայսարովին նույնականացրել է տեսախցիկների տեսագրություններն ուսումնասիրելով: Նա դուրս է եկել այն բնակարանից, որտեղ հայտնաբերվել էր Այշատի մարմինը մեկ այլ անձի հետ՝ հավանաբար Կարինա Իմինովայի, որի հետ Այշատը հանդիպել էր մահից մեկ օր առաջ:

SOS ճգնաժամային խումբը հայտարարել է, որ «հետաքննիչները գիտեն այդ անձանց անունները», բայց նրանք չէին հետախուզվում, ուստի կարող էին հեշտությամբ լքել Հայաստանը: «Սա մտահոգություններ է առաջացնում, որ գործը պարզապես կփակվի: Սկսվել է սպանության հետաքննություն՝ վկաների ցուցմունքներով եւ տեսախցիկների տեսագրություններով: Հանցագործության վայրում կա երկու անձ, որոնք այնուհետ արագ հեռանում են: Սովորական դեպքում նրանց նկատմամբ անմիջապես կհայտարարվեր հետախուզում»,- հայտարարել են իրավապաշտպանները՝ մեղադրելով ՀՀ իրավապահներին:

Հիշեցնենք, որ Այշատ Բայմուրադովան Ռուսաստանից եկել էր Հայաստան՝ ընտանեկան բռնության պատճառով: Նա չի վերադարձել հոկտեմբերի 15-ի երեկոյան Երեւանում զբոսանքից եւ դադարել է պատասխանել հեռախոսազանգերին: Հոկտեմբերի 20-ին ոստիկանությունը հայտնել է, որ նրան մահացած են գտել քաղաքի կենտրոնում գտնվող վարձակալված բնակարանում: Հայ իրավապաշտպանները պահանջել են Այշատ Բայմուրադովայի սպանության անկախ եւ թափանցիկ հետաքննություն: Նրանք նշել են, որ Բայմուրադովայի մահը հիշեցնում է այն, որ «բռնությունից փախչող կանայք դեռեւս լիովին անվտանգ չեն նույնիսկ այն վայրերում, որտեղ նրանք պաշտպանություն են փնտրում»:

Իրավապաշտպան **Նինա Կարապետյանցը**, անդրադառնալով դեպքի նոր մանրամասներին, մեզ հետ զրույցում նշում է. «Հայաստանյան իրավապահ մարմիններն ունեն մեկ ֆունկցիա՝ պաշտպանել մեկ անձի: Նրանք ուրիշ գործ չունեն, դա է պատճառը, որ կարող են բոլորին սպանել եւ առանց որեւէ խոչընդոտի լքել պետությունը: Իրականում իրավիճակը շատ տարբեր կարող է լինել, անձը, որն ունի անվտանգության խնդիրներ, կարող է կցված լինել իրավապահ համակարգին կամ ապաստան ստանալ պետությունից որոշ ժամանակ: Հանուն արդարության ուզում եմ ասել, որ այնպես չէ, որ առաջադեմ ու զարգացած երկրներում կարողանում են ապաստան ստացած անձանց անվտանգությունը լիարժեք ապահովել, ինձ հայտնի են դեպքեր, երբ հատուկ ծառայությունների ներկայացուցիչները իրենց հատուկ մեթոդներով կարողացել են իրենց առջեւ դրված խնդիրներն իրագործել: Հայաստանն այս առումով բացառիկ չէ, միեւնույն ժամանակ Հայաստանն ունի առավելություններ: Մենք իրականում շատ փոքր ցանցային միջավայր ենք, եւ բոլորս բոլորին ճանաչում ենք: Օրինակ՝ եթե մի թաղամասում հայտնվում են նոր՝ անհասկանալի մարդիկ, անծանոթ մեքենաներ, դրան անպայման հասարակությունն արձագանքում է: Իրականում մեր հասարակությունն անտարբեր չէ, ի տարբերություն մեծ երկրների: Մեր պետության փոքր եւ ցանցային լինելը հնարավորություններ է տալիս նաեւ իրավապահ մարմիններին, որպեսզի արագ արձագանքեն, սակայն, ցավոք, իրավապահները մեկ ֆունկցիա են իրականացնում. կա՛մ ինչ-որ կեղծ պատարագի են մասնակցում, կա՛մ էլ մեկ անձի են պաշտպանում, այլ ֆունկցիա նրանք չունեն այսօր: Իրավապահները մասնավոր զրույցներում դժգոհություններ են հայտնում, քանի որ ողջ իրավապահ համակարգը մեկ գծի վրա է: Իհարկե, նրանք բացահայտ այդ մասին չեն խոսում, շատերն անգամ կարող են հերքել, բայց բոլոր ոլորտներում էլ ունենք մտերիմներ, որոնց հետ ունենում ենք մտերմիկ զրույցներ: Մեկ գծի վրա աշխատելով՝ իրավապահները ֆիզիկապես չունեն այլ հարցերով զբաղվելու ժամանակ: Անգամ ես չեմ մեղադրում իրավապահներին, սա քաղաքական բնույթի խնդիր է, եւ գուցե Փաշինյանի մոլի երկրպագուները խիստ նեղվեն իմ ասածից, բայց չեչեն աղջկա սպանության համար էլ է Նիկոլ Փաշինյանը մեղավոր: Նա ողջ ռեսուրսն օգտագործում է՝ պարզելու համար, թե ով ում հետ է հարաբերվում, կենակցում եւ այլն, պարզ է, որ նման սպանություններին, հանցագործություններին պարզապես ժամանակ չի մնալու: Մենք՝ հայերս, լեռնային ժողովուրդ ենք, մենք անօգնականին միշտ օգնում ենք, դա մեր ազգային սովորույթներից է, եւ այլ ազգերի մոտ Հայաստանն անվտանգության զգացում է առաջացնում, սակայն քանի որ իրավապահ համակարգը ֆիքսված է մեկ գծի վրա, նման դեպքերը կարող են լինել շարունակական»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 8.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱԴՐԲԵՋԱՆՈՎ ՅՈՐԵՆԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԿԱՊ ՉՈՒՆԻ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

«Ադրբեջանի կողմից Հայաստանի համար նախատեսված ապրանքների տարածման խոչընդոտների վերացումն ամենեւին չեմ կապում վաշինգտոնյան պայմանավորվածությունների հետ»,- անդրադառնալով Ադրբեջանի, այնուհետեւ Վրաստանի տարածքով ռուսական ցորենի Հայաստան տեղափոխմանը՝ ասաց «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ղեկավար, քաղաքագետ **Սուրեն Սուրենյանցը**: «Ադրբեջանի այս քայլը հաջորդեց Դուշանբեում անցկացված ԱՊՀ անդամ երկրների գագաթնաժողովին, հետեւաբար՝ գործ ունենք ռուսական նախաձեռնության հետ: Պատահական չէ, որ այսօր բավականին սպառիչ մեկնաբանություններով իմ նշած փաստն անուղղակիորեն հաստատել է ՌԴ փոխվարչապետ Օվերչուկը: Այսպիսով, Ռուսաստանը փորձում է Կովկասում իր ազդեցությունը պահպանել գոնե կամ մեծացնել՝ կոմունիկացիաների նկատմամբ որոշակի մոդերատորություն իրականացնելով, հետեւաբար եկեք արձանագրենք, որ սա ավելի շատ ռուսական նախաձեռնություն է: Եվ, այո, առաջին հերթին Մոսկվան պայմանավորվել է Բաքվի հետ, բայց կարծում եմ, որ Երեւանն էլ որոշակի մասնակցություն ունի այս պայմանավորվածություններին»,- ասաց քաղաքագետը: Հարցին, թե արդյոք այս գործընթացը չի՞ վնասում Վրաստանի հետ հարաբերություններին, քաղաքագետը նկատեց, որ Վրաստանի հետ ճիշտ աշխատելու դեպքում որեւէ ռիսկ չի կարող առաջանալ Թբիլիսիի հետ, որովհետեւ ցանկացած պետություն փորձում է դիվերսիֆիկացնել իր կոմունիկացիաները, որով արտերկրից տարբեր տեսակի ապրանքներ է ստանում:

«Այս առումով Վրաստանի հետ պետք է նորմալ աշխատել, մանավանդ որ Ադրբեջանով եկող բեռները, ըստ էության, տեղափոխվում են Վրաստանի տարածքով՝ դրանք միանգամից Հայաստան չեն մտնում: Օրինակ, ղազախական ցորենն Ակտաուով գալիս է Ադրբեջան, ադրբեջանական երկաթգիծը միանում է վրացական երկաթգծին, այնտեղից տեղափոխում է Հայաստան»,- ասաց Սուրենյանցը: Իսկ Փաշինյանի կողմից վաշինգտոնյան բանակցությունների ֆոնին ռուսական կողմի հետ պայմանավորվածությունները կյանքի կոչելն արդյոք չի՞ բերի մեր տարածաշրջանում ամերիկա-ռուսական նոր լարվածության, այսպես թե այնպես մեր տարածաշրջանում մոդերատորության նպատակով մրցակցության համար: Քաղաքագետը չի բացառում, որ լարվածություն կառաջանա, բայց հարցն այն է, թե Հայաստանի իշխանություններն ինչ քաղաքականություն կվարեն. արդյոք կփորձե՞ն այնպես անել, որ աշխարհաքաղաքական շահերը մեր երկրում ներդաշնակվեն, թե՞ այնպիսի քաղաքականություն կվարեն, որի հետեւանքով մեր երկիրը կդառնա աշխարհաքաղաքական շահերի բախման կիզակետ:

«Սկզբունքորեն եկեք չբացառենք՝ տեսական մակարդակով, որ Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ, այնուամենայնիվ, դիվանագիտական խողովակներով ինչ-որ շփումներ կան, եւ այս հարցում նրանց միջեւ ինչ-որ կոմպրոմիսներ եւ համաձայնություններ էլ կան»,- ասաց Սուրեն Սուրենյանցը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am